

891.71
LF 168
08-5

Ձ. 111.419

№ 4 ԱԻԵՏԻՍ ՊՕՂՈՍԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՖՕՆԴ № 4

Լ. Ն. ՏՕՂՍՏՕՅ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

Պ Ա Տ Մ Ո Ւ Ա Ծ Ք Ն Ե Ր

Բ. ՊՐԱԿ

(Հեղինակի ծննդեան ուժտոմամեայ յօրեղեանի առիթով)

2081
5/11/08

ԹԱՐԳ. Ա. Մ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2.

ԹԻՖԼԻՍ

ԵԼԵՏՏՐԱՉԱՐԵ ՏՊԱՐԱՆ ՈՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՍԻ, ՊՈԼԻՑ 7.
1908

3-3166/2

19 NOV 2010
3-3166

№ 4 ԱԻԵՏԻՍ ՊՕԼՈՍԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ՑՕՆԴ № 4

891.71
S-80

3742
Jm


Լ. Ն. ՏՕԼՍՏՕՅ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

Պ Ա Տ Մ ՈՒ Ա Ծ Ք Ն Ե Ր

Բ. ՊՐԱԿ

(Հեղինակի ծննդեան ուժարմամեայ յօրեղեանի առիժով)



ԹԱՐԳ. Ա. Մ.

ИХВ. № 27474

ԹԻՖԼԻՍ

ԵԼԵԲՐԱՅԱՆԵ ՏՄԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՍԻ, ՊՕԼԻՑ. 7.
1908

23 .08. 2013

14086



39965-67

ՁՈՒԱԶԱՓ ՀԱՏԻԿԸ



Մի անգամ երեխաները ձորի մէջ գտան ձուի մեծութեան մի բան, որ ակօսի պէս երկար փոս ունէր մի գլխից մինչև միւս գլուխն և նման էր հատիկի: Այդ բանը տեսաւ մի անցորդ, գնեց երեխաներից, տարաւ քաղաք ու ծախեց թագաւորին, ինչպէս հազազիւտ իր:

Թագաւորը կանչեց իմաստուն մարդկանց և հրամայեց, որ իմանան, թէ դա ինչ բան է,—ձու է թէ հատիկ: Իմաստունները մտածեցին, մտածեցին, չը կարողացան պատասխան տալ: Հազազիւտ իրը դրուած էր պատուհանի գոգում. ներս թուաւ մի հաւ, սկսեց կտցել ու ծակ բացեց. հիմա ամենքն էլ տեսան, որ հատիկ է: Իմաստուններն եկան ու ասացին թագաւորին, թէ դա կորեկի հատիկ է:

Թագաւորը զարմացաւ: Հրամայեց իմաստուններին իմանալ, թէ որտեղ ու ինչ ժամանակ է բուսնել այդ հատիկը: Իմաստունները մտածեցին, մտածեցին, գրքերը տակն ու վրայ արին փնտռելով— ոչինչ չը գտան: Եկան թագաւորի մօտ ու ասացին. «Չենք կարող պատասխան տալ. մեր գրքերի մէջ այդ բանի մասին ոչինչ չէ գրած. պէտք է գիւղացիներից հարցնել խօս չե՞ն լսել ձերերից,

թէ երբ և որտեղ էին ցանուժ այդ տեսակ հատիկներ»:

Թագաւորը մարդ ուղարկեց և հրամայեց, որ իր մօտ բերեն մի ծեր, շատ ծեր գիւղացու: Գտան մի այդպիսի շատ ծեր գիւղացի ու բերին Թագաւորի մօտ: Ծերունին եկաւ, կանաչի խփող դէմքով, առամները թափած. նա հազիւ հազ ներս մտաւ երկու գաւազանի վրայ յենուած:

Թագաւորը ցոյց տուեց նրան հատիկը, բայց բանն այն է, որ ծերունին լաւ չէր տեսնում. հատիկի կէսը տեսաւ, միւս կէսը ձեռքով շփշփեց:

Թագաւորն սկսեց հարցնել նրան. «Ո՞ւր չը գիտես, պապի, թէ որտեղ է բուսնել այդ հատիկը. ինքդ քո հանդում խօ չէս ցանել այդպիսի սերմ կամ քո կեանքիդ մէջ խօ չէ՞ պատահել գնել»:

Ծերունին խուլ էր. հազիւ հազ լսեց, հազիւ հազ հասկացաւ: «Չէ,—ասում է,—ես էս հասակը քաշել եմ, էդպիսի հատիկ իմ հանդում ոչ ցանել եմ, ոչ քաղել և ոչ էլ փողով առել: Երբ որ փողով էինք առնում հացը՝ հատիկներն էլի էնպէս մանր էին, ինչպէս հիմի: Պէտք է,—ասում է,—իմ հօրիցս հարցնել. կարելի է նա լսել է, թէ էդ տեսակ սերմ որտեղ էր բուսնում»:

Թագաւորը մարդ ուղարկեց ծերունու հօրը կանչելու: Գտան ու բերին Թագաւորի մօտ: Եկողը մի շատ ծեր մարդ էր՝ մի գաւազանի վրայ յենուած: Թագաւորը ցոյց տուեց նրան հատիկը: Ծերունու աչքերի լոյսը, ուղիղ է, քիչ պակասել էր, բայց էլի լաւ տեսաւ հատիկը: Թագաւորն սկսեց հարցնել նրան. «Չը գիտես արդեօք, ծերունի, որտեղ էր բուսնում այս տեսակ հատիկ. դու ինքդ քո հան-

դում խօ չէս ցանել մի ժամանակ կամ կեանքիդ մէջ խօ չէս գնել»:

Ծերունու աղանջները թէև ծանր էին լսում, բայց և այնպէս որդուց աւելի լաւ լսեց. «Չէ,—ասում է,—իմ կեանքիս մէջ էդ տեսակ հատիկ ոչ ցանել եմ, ոչ հնձել, իսկ փողով առնել չէի էլ կարող, քանի որ իմ ժամանակ փող ասած բանը չէին էլ իմանում ինչ է: Ամենքն էլ իրանց հացով էին կեքակրվում, իսկ երբ պակասութիւն կար՝ իրարու մէջ բաժին-բաժին էին անում: Չը գիտեմ, թէ էդ տեսակ հատիկ որտեղ էր բուսնում: Թէև իմ ժամանակուայ հատիկը հիմիկուանից խոշոր էր ու աղալիս էլ աւելի ալիւր էր թափում, բայց էդ տեսակը չեմ տեսել իմ աչքով: Լսել եմ միայն հօրիցս, որ նրա ժամանակ սերմն աւելի լաւ էր բուսնում և ալիւր աւելի շատ թափում, բան մեր ժամանակը, պէտք է նրանից հարցնել»:

Թագաւորն ուղարկեց կանչելու ծերունու հօրը: Գտան պապին էլ ու բերին Թագաւորի մօտ: Ծերունին ներս մտաւ Թագաւորի ապարանքն առանց գաւազանի. ոտներն այնպէս թեթեւ էր փոխում, ասես, ջահէլ մարդ լինէր. աչքերը՝ պարզ, լսողութիւնը՝ տեղը ու խօսուածքն էլ՝ բարձր:

Թագաւորը ցոյց տուեց պապին հատիկը: Պապը մտիկ տուեց, ձեռքն առաւ և շուռ ու մուռ տուեց: —Վաղուց է,—ասաց,—ես չեմ տեսել հին անուշ հացը:

Պապն առամներով կտրեց մի փշրանք ու մի քիչ ծամեց:

—Չէնց էն է,—ասաց:

—Ասա ինձ, պապի, որտեղ և ինչ ժամանակ

էր բուսնում այսպիսի հատիկ. դու քո հանդում խօ
չէս ցանել կամ կեանքիդ մէջ չէս գնել ուրիշներից:
Ծերունին ասաց.---

«Իմ ժամանակ էդ տեսակ սերմ ամեն տեղ էլ
բուսնում էր. էդ հացով եմ ես իմ ամբողջ կեանքս
կերակրուել և ուրիշներին էլ կերակրել: Չէնց էդ
սերմն եմ ցանել, էդ եմ հնձել, էդ էլ աղացել»:

Եւ թագաւորը հարցրեց.— «Ուրեմն ասա ինձ,
պապի, մի տեղ դու գնե՞լ ես այսպիսի սերմ կամ
ինքդ քո հանդումդ ցանե՞լ ես»:

Ծերունին ժպտաց ըթի տակ. «Իմ ժամանակ,—
ասաց,— ոչ ոք մտածել անգամ չէր կարող էդ տե-
սակ մեղք բան, որ հացը ծախէ կամ առնի, իսկ
փողն ինչ է, չէին էլ իմանում: Ամենքն էլ իրանց
հացն ունէին առատ-առատ»:

Եւ թագաւորը հարցրեց.— «Ուրեմն ասա ինձ,
պապի, սրտեղ էիր ցանում դու այս տեսակ սերմ և
սրտեղ էր քո հանդը»:


Պապին պատասխանեց.— «Իմ հանդս Աստու
աշխարհն էր. ուր որ վար էի անում, էն էլ իմ
հանդս էր. հողն ազատ էր. ոչ ոք չէր ասում «իմ
հողս». «Իմս» ասում էին միայն աշխատանքի հա-
մար»:

— «Ասա ինձ,— խօսեց նորից թագաւորը,— էլի
երկու բան. մէկը, թէ ինչու առաջ այդ տեսակ սերմ
բուսնում էր և հիմա չէ բուսնում. իսկ միւսը, թէ
ինչու քո թողդ ման է գալիս երկու գաւազանով,
որդիդ եկաւ մէկ գաւազանով, իսկ դու ահա եկել
ես թեթե-թեթե, առանց գաւազանի. քո աչքերդ
պայծառ են, առամներդ՝ ամուր ու խօսուածքդ էլ
պարզ և քաղցր: Ինչիցն է, պապի, այդ երկու բանը:

Ու ծերունին ասաց.— «էդ երկու բանը նրանից
է, որ մարդիկ թողին իրանց աշխատանքով ապրելն
ու սկսեցին աչք տնկել ուրիշի աշխատանքի վրայ:
Հին ժամանակ էդպէս չէին ապրում. հին ժամանակ
ապրում էին էնպէս, ինչպէս Աստուած է պատուի-
րել— իրանցը վայելում էին և ուրիշի ունեցածի
վրայ աչք չէին գցում»:



ՄԱՆՆԱՆ ՄԻՆԻՍ
ԲԻ ՔՈՒՄ ԻՅՄԻ ԻԿ



Մի խեղճ գիւղացի գնաց դաշտ վար անելու-
տանից որ դուրս եկաւ, նա բերանը բան չէր
դրել. դրա համար էլ իր հետ վերցրեց մի պա-
տառ հաց: Դաշտում արօրը սարքեց, յետ արեց
քարշակը, դրեց մի թփի տակ, նրա մօտ էլ դրեց
հացի պատառն ու ծածկեց արխալուղով: Երբ երկար
ժամանակ վար անելուց յետոյ ձին դադրեց՝ ինքը
գիւղացին էլ քաղցածացաւ. նա արօրը մի կողմ
բաշեց, արձակեց ձիուն, բաց թուեց, որ արածի ու
ինքն էլ գնաց թփի մօտ հաց ուտելու: Վերցրեց ար-
խալուղը, տեսաւ՝ հացը չը կայ. պտրտեց, պտրտեց,
շուռ տուեց ձեռքի մէջ արխալուղը, թափ տուեց՝
չը գտաւ ու չը գտաւ: Գիւղացին զարմացաւ: «Հրաշք
է, ես ու իմ Աստուած, — մտածեց նա, — ոչ ոք աչ-
քովս չընկաւ, բայց հացը տարած է»: Դա փոքրիկ
սատանի բանն էր: Գիւղացին որ վար էր անում,
նա թոցրեց հացի պատառն ու նստեց թփի ետևը,
որ լսէ, թէ ինչպէս պիտի գիւղացին հայհոյէ ու
սատանի անունն էլ յիշէ:

Գիւղացին շատ ափսոսաց:

«Է՛, լաւ, սոված չեմ մեռնի, — մտածեց նա, —
երևում է, պէտք է եղել նրան, ով որ տարել է.
Թող անուշ անէ, հալալ լինի»:

Եւ գիւղացին գնաց աղբիւրի մօտ, ջուր խմեց, հանգստացաւ, ձին բռնեց, լծեց ու նորից սկսեց վարել:

Փոքրիկ սատանան շփոթուեց. նա ամաչեց, որ չը կարողացաւ գիւղացուն մեղքի մէջ գցել ու գնաց գանգատուելու սատանաների գլխաւորին: Գնաց ու պատմեց, թէ ինչպէս գողացաւ հացի պատառը գիւղացուց և ինչպէս գիւղացին, հայհոյելու տեղակ, ասաց «հալալ լինի»: Սատանաների գլխաւորը բարկացաւ. «Թէ որ,—ասում է,—գիւղացին էդ բանի մէջ յաղթեց քեզ՝ դու ինքդ ես մեղաւոր. անշնորհք ես եղել: Թէ որ,—ասում է,—գիւղացիներն ու նրանց մտիկ տալով՝ կնիկ մարդիկ էլ սկսեն միշտ էդպէս վարուել՝ մենք էլ ինչաց՞ն ենք, ինչի՞ համար պիտի ապրենք: Չէ, էդ բանն էդպէս չէ կարելի թողնել: Գնա՛, —ասում է,—նորից գիւղացու մօտ ու հացի պատառի տեղը հանէ: Եթէ դու երեք տարուայ մէջ գիւղացուն չը յաղթես՝ ես քեզ օրհնած ջրի մէջ կը լողացնեմ»:

Փոքրիկ սատանան վախեցաւ. վազեց երկիր, սկսեց հնարքներ մտածել, թէ ինչպէս իր մեղքը քաւէ: Մտածեց, մտածեց ու գտաւ հնարքը: Նա բարի մարդու կերպարանք առաւ ու գնաց, խեղճ գիւղացու մօտ մշակ մտաւ: Եւ սովորեցրեց նա գիւղացուն չորային տարին հացը ցանել թաց, ճահճոտ տեղում: Արևն այրեց միւս գիւղացիներին արտերը, բայց խեղճ գիւղացունը լաւ, խիտ կանաչեց, բարձրացաւ ու խոշոր-խոշոր հասկեր գցեց: Գիւղացին կերակրուեց իր հացով մինչև նոր հունձն ու էլի շատ հաց մնաց: Միւս ամառուայ համար մշակը սովորեցրեց գիւղացուն հացը ցանել սարերում: Ամառն անձրևային դուրս եկաւ: Ուրիշների արտերը պառ-

կեցին, փթեցին ու գլուխ չը գցեցին, իսկ խեղճ գիւղացին իր՝ սարի արտից առատ հաց ստացաւ: Գիւղացու մօտ այդ տարին էլ հացը շատ աւելացաւ ու նա չէր իմանում, թէ ինչ անէ աւելացած հացը:

Ու մշակը սովորեցրեց գիւղացուն հացից արաղ քաշել: Գիւղացին արաղ քաշեց, սկսեց ինքը խմել և ուրիշներին խմեցնել: Փոքրիկ սատանան գնաց իրանց գլխաւորի մօտ ու սկսեց պարծենալ, թէ հացի պատառի տեղը հանել է: Գլխաւորը գնաց մտիկ տալու:

Եկաւ գիւղացու մօտ, տեսաւ, որ նա կանչել է հարուստներին ու արաղով պատուում է նրանց: Մօտ բերողը գիւղացու կինն էր. նա էր ծառայում հիւրերին: Նոր էր սկսել նա հրամցնել, որ փէշն ընկաւ սեղանին ու բաժակը թափուեց: Գիւղացին բարկացաւ, անպատուեց կնոջը. «Տես, տես,—ասաց նա,—գրողի տարած, դա աղբաջուր է, որ դու քո կոտրած ձեռներով էդ պատուական ապրանքը գետին ես թափում»:

Փոքրիկ սատանան թևով խփեց գլխաւորին. «Մտիկ տո՛ւր,—ասաց նա,—տես ինչպէս նա հիմի չէ ափսոսում հացի պատառը»:

Գիւղացին անպատուեց, հայհոյեց կնոջն ու ինքն սկսեց հրամցնել: Աշխատանքից եկաւ մի խեղճ գիւղացի նրա մօտ առանց կանչելու: Բարև տուեց, նստեց, տեսաւ, որ մարդիկ արաղ են խմում. նա յոգնած-դաղբած էր—նրա սիրտն էլ ուզեց մի բաժակ արաղ խմել: Նստեց, նստեց, կուլ տուեց թուքը, կուլ տուեց,—տանտէրը չը հրամցրեց նրան. միայն իր մտքում փնթփնթաց. «Ամեն մէկի համար ես օրտեղից արաղ ձարեմ»:

Այս էլ դուր եկաւ սատանաների գլխաւորին. իսկ փոքրիկ սատանան շարունակ պարծենում էր. «Սպասիր. էդ ի՞նչ է որ»:

Հարուստ գիւղացիները խմեցին, խմեց և ինքը տանտէրը: Յետոյ սկսեցին իրար երեսին կեղծաւորութիւն անել, իրարու գովել և անամօթ խօսքեր խօսել: Սատանաների գլխաւորը լսեց, լսեց ու դրա համար էլ գովեց փոքր սատանային: «Թէ որ էդ խմիչքից,—ասում է,—իրարու մօտ աղուէսութիւն պիտի անեն ու իրար խաբեն, նրանք բոլորն էլ մեր ձեռքում կը լինեն»:—«Սպասիր,—ասում է փոքրը,—տես թէ յետոյ ինչ կը լինի. թող մէկ երկրորդ բաժակը խմեն: Հիմի նրանք աղուէսների պէս մէկ մէկու առաջ պոչ են թափ տալիս, մէկ մէկու խաբել են ուզում, բայց քիչ համբերիր, շուտով նրանք կատաղած գայլեր կը դառնան»:

Գիւղացիները խմեցին երկրորդ բաժակը. նրանց ձայնն աւելի բարձրացաւ, խօսակցութիւնը դարձաւ կոշտ ու կոպիտ: Անամօթ խօսքերի տեղ՝ սկսեցին նրանք հայհոյանքներ թափել բերաններից և իրար վրայ բարկանալ. յետոյ խառնուեցին իրար, սկսեցին կըռուել ու մէկ մէկու քիթ ու բերան տրորեցին: Տանտէրն ևս մէջ ընկաւ. նրան էլ լաւ ջարդեցին:

Սատանաների գլխաւորը մտիկ տուեց ու այդ բանին էլ հաւանեց: «Լաւ է,—շատ լաւ է»—ասաց:—«Սպասիր, էդ ի՞նչ է որ,—խօսեց փոքրիկ սատանան,—թող երրորդ բաժակը խմեն. հիմի նրանք գայլերի պէս կատաղել են, քիչ կանցնի, երրորդը կը խմեն ու արդէն խոզ կը դառնան»:

Գիւղացիները խմեցին երրորդ բաժակն ու խելքները բոլորովին կորցրին. իրանք էլ չը գիտէին, թէ

ինչ էին բղաւում-ճղաւում և ոչ էլ լսում էին իրար: Սկսեցին ցրուել մէկ-մէկ, երկուս-երկուս, երեք-երեք, բայց բոլորն էլ փողոցներում վէր թափուեցին: Տանտէրը դուրս եկաւ ճանապարհ դնելու նրանց, ինքն էլ քիթ ու բերանի վրայ ընկաւ ցեխի մէջ, բոլորովին կեղտոտուեց, պառկեց ու խոզի նման ըսկըսեց խռխուալ:


Սատանայապետին այս բանն աւելի դուր եկաւ: «Է,—ասաց,—լաւ խմիչք ես հնարել, հացի պատառի տեղը հանեցիր: Բայց ասա, խնդրեմ, ի՞նչպէս շինեցիր դու այդ խմիչքը: Անպատճառ դու առաջ խառնել ես նրա մէջ աղուէսի արիւն, դրանից է, որ գիւղացին աղուէսի պէս խորամանկ դարձաւ: Յետոյ խառնել ես գայլի արիւն, դրանից էլ նա կատաղեց, ինչպէս գայլ: Իսկ վերջում դու խառնել ես, երևի, խոզի արիւն, դրանից է, որ նա խոզ դարձաւ»:

«Ո՛չ,—ասաց փոքրիկ սատանան,—ես էդպէս չեմ արել: Ես միայն նրան էն բանն արի, որ աւելորդ հաց բուսցնել տուի: Նա—գազանական արիւնը—միշտ էլ մարդու մէջ կայ, բայց նա ճամբայ չէ գտնում երևալու, քանի որ հացը բուսնում է այնքան, որքան պէտք է: Այն ժամանակ նա հացի վերջին պատառն էլ չը խնայեց, իսկ երբ սկսեցին հացից աւելացածներ մնալ՝ սկսեց հնարքներ մտածել, թէ ինչպէս անէ, որ իրան զուարճացնէ: Ու ես նրան մի զուարճութիւն սովորեցրի—արաղ խմել: Եւ երբ սկսեց նա Աստծու տուած հացն արաղ շինել իր զուարճութեան համար, նրա մէջ խօսեց և աղուէսի, և գայլի, և խոզի արիւնը: Հիմի թող միայն արաղ խմէ, միշտ էլ գազան կը դառնայ»:

39963-67



Սատանայապետը գովեց փոքրիկ սատանային,
ներեց նրա մեղքը հացի պատառի համար ու տարա-
լի մօտ գլխաւոր կարգեց ուրիշների վրայ:



Ի Լ Ե Ա Ս



Վիայի նահանգում ապրում էր մի բաշկիր, անունը Իլեաս: Հօրից քիչ բան էր մնացել նրան. հայրը միայն մի տարի առաջ ամուսնացրել էր Իլեասին ու ինքը մեռել: Նրա ունեցած-չունեցածն այդ ժամանակ եօթը մատեան էր, երկու կով և տաս-քսան գլուխ ոչխար: Բայց Իլեասը տնարար մարդ էր. նա սկսեց աւելացնել իր ունեցածը: Առաւօտից մինչև երեկոյ աշխատում էր իր կնկայ հետ. ամենից վաղ վեր էր կենում և ամենից ուշ պառկում քնելու. ու տարէ-ցտարի նա հարստանում էր: Այդպէս աշխատելով նա անցկացրեց 35 տարի և մեծ հարստութիւն զիգեց:

Իլեասն հիմա ունէր երկու հարիւր ձի, հարիւր յիսուն գլուխ տաւար և հազար երկու հարիւր գլուխ ոչխար: Մշակներն արածացնում էին Իլեասի ջոկերը, նախիրներն ու հօտերը, իսկ բանուոր կանայք կթում էին մատեաններին ու կովերին և շինում կումիրս, իւղ ու պանիր: Ամեն բան առատութեամբ ունէր Իլեասը և բոլոր հեռու ու մօտիկ հարեանները նախանձում էին նրա ապրուստին: Ամենքն ասում էին. «Բախ-

տաւոր մարդ է Իլեասը. ամեն բանից էլ ունի շատ-շատ. էդպէս մարդն էլ ինչի՞ մեռնի»: Պատաւար մարդիկ սկսեցին հիւր կանչել Իլեասին և գնալ-գալ նրա մօտ: Հիւրեր գալիս էին նրա մօտ հեռու տեղերից և Իլեասն ամենքին ընդունում, ամենքին ուտեցնում ու խմեցնում էր: Ով էլ գար՝ ամենքի առաջ պիտի գնէր կումիս, թէյ, շորուայ, ոչխարի միս: Հէնց որ հիւրերը գալիս էին՝ իսկոյն մորթում էին մէկ կամ երկու ոչխար, իսկ եթէ եկողները շատ էին լինում՝ մորթում էին և մատեան:

Իլեասն երկու տղայ ունէր և մի աղջիկ: Նա ամուսնացրեց տղերանցն ու աղջկան էլ մարդու տուեց: Երբ Իլեասն աղքատ էր՝ որդիքն աշխատում էին հօր հետ և իրանք պահում էին իրանց ձիաներին ու ոչխարներին, իսկ երբ հարստացան, որդիքն սկսեցին պարապ-սարապ քաշ գալ. մէկը մինչև անգամ սկսեց հարբել: Մեծին կուր մէջ սպանեցին, իսկ միւսը հպարտ կնոջ խօսքով սկսեց չը լսել հօրը և հայրն ստիպուած եղաւ բաժանել նրան:

Երբ որ Իլեասը բաժանուեց որդուց՝ նրան տուն տուեց, ապրանք տուեց ու այսպիսով Իլեասի հարստութիւնը պակասեց: Իրանից յետոյ շատ չանցաւ՝ Իլեասի ոչխարների մէջ մի ինչ-որ հիւանդութիւն ընկաւ և նրանցից շատերը կտորուէցին: Յետոյ վըրայ եկաւ սովի տարի, խոտ չը բուսնաւ. այդ ձմեռ էլ շատ տաւար սատկեց: Այդ էլ բաւական չէր. խըր-խըզները խլեցին Իլեասից նրա ամենալաւ հողաբաժինը և Իլեասն սկսեց աւելի ու աւելի ցած իջնել: Իրա հետ միասին քանի գնում, Իլեասի ոյժերը պակասում էին. 70 տարեկան ժամանակ նա այն տեղը հասաւ, որ սկսեց ծախծխել իր մուշտակները, գոր-

գերը, թամբերը, վրանները. յետոյ էլ ծախեց ունեցած-չունեցած տաւար ու ոչխարն և դարձաւ տնանկ աղքատ: Իլեասն ինքն էլ չիմացաւ, թէ ինչպէս ձեռքից գնաց հարստութիւնը ու ծերութեան ժամանակ ստիպուած եղաւ կնոջ հետ միասին ուրիշների մօտ ծառայ մտնելու: Իլեասի ամբողջ կարողութիւնից նրա մօտ մնացին միայն հագի շորերը, մուշտակը, մորթէ գլխարկը, իշակներն ու կօշիկներն և պառակինը՝ Շամ-Շեմագին: Բաժանուած որդին գնաց հեռու երկիր, իսկ աղջիկը մեռաւ: Ծերունիներին օգնող անգամ չը մնաց:

Հարևաններից Մուհամմէդ Շահը խղճաց ծերունիներին: Ինքը Մուհամմէդ Շահն ոչ հարուստ էր, ոչ աղքատ. ապրում էր միատեսակ ու լաւ էլ մարդ էր: Նա միտքը բերեց Իլեասի տանը մի ժամանակ կերած աղուհացը, ցաւեց նրա վրայ ու ասաց նրան. «Արի, Իլեաս, ինձ մօտ ապրիլ պառակիդ հետ միասին: Ամառը, ինչքան ոյժդ կը պատէ, աշխատիլ քաշի մէջ, ձմեռը՝ տաւարին կեր տուր, իսկ Շամ-Շեմագին թող մատեանները կթէ ու կումիս շինէ: Ես ձեզ երկուսիդ էլ կը կերակրեմ, կը հագցնեմ ու ինչ էլ որ հարկաւոր լինի՝ կասէք՝ կը տամ»: Իլեասը շընորհակալութիւն յայտնեց հարևանին և կնոջ հետ միասին սկսեց ապրել նրա մօտ, ինչպէս մշակ: Ըսկըզբում ծանր թւաց ամեն բան. յետոյ ծերունիները սովորեցին ու սկսեցին ապրել Մուհամմէդ Շահի մօտ և ոյժերի չափ աշխատել:

Մուհամմէդ Շահին ձեռնտու էր նրանց նման մըշակներ ունենալ, որովհետև ծերունիներն իրանք մի ժամանակ տանուտեղի տէր էին, գիտէին ինչ որ պէտք էր անել, չէին ծուլանում և ինչքան ոյժ կար

մէջները՝ աշխատում էին: Միայն երբեմնապէս ցաւում էր Մուհամմէդ Շահի սիրտը, որ այդպիսի բարձր մարդիկ այդքան ցած աստիճանի են իջել:

Մի անգամ այնպէս պատահեց, որ Մուհամմէդ Շահի մօտ հեռու տեղից հիւրերը եկան—նրա խնամիրները: Նրանց հետ եկել էր և մօլլան: Մուհամմէդ Շահը հրամայեց իլեասին մի ոչխար բռնել ու մորթել: Իլեասը քերթեց ոչխարին, եփեց և ուղարկեց հիւրերին: Հիւրերը կերան ոչխարի միսը, թէյ խմեցին ու սկսեցին կուծիս խմել: Նստել են հիւրերը տանտիրոջ հետ բմբուլի բարձերի ու գորգերի վրայ, թասերով կուծիս են խմում ու զրոյց անում տանտիրոջ հետ, իսկ իլեասը գործերը վերջացրեց ու անցկացաւ դռան առաջից: Մուհամմէդ Շահը տեսաւ նրան ու ասաց հիւրերից մէկին. «Տեսա՞ր էն ծերունուն, որ անցաւ դռան առաջից»:—«Տեսայ, — ասաց հիւրը, — ի՞նչ զարմանալու բան կայ որ էդ մարդու մէջ»:— «էն կայ նրա մէջ զարմանալու բան, որ նա մեր առաջին հարուստ մարդն էր, իլեաս է անունը, կարելի է լսած լինես»:—«Ի՞նչպէս չէ. լսել եմ, — ասում է հիւրը, — ուղիղ է, չեմ տեսել, բայց նրա համբաւը հեռուներն էլ լսել են»:

— Ա՛յ հիմի էդ մարդն էլ ոչինչ չունի. ինձ մօտ աշխատում է, ինչպէս մշակ, եկինն էլ մատենաներ է կթում:

Հիւրը զարմացաւ. շրխկացրեց լեզուով, շարժեց գլուխն ու ասաց. «Հա՛, երևում է, բաղդը դառնում է, ինչպէս անիւ. մէկին վեր է բարձրացնում, միւսին ցած իջեցնում: Կարծում եմ, ծերունին յիշում է անցածն ու մորմոքում, այնպէս չէ՞»:

— Ո՞վ է իմանում, ապրում է խաղաղ, հանգիստ, լաւ էլ աշխատում է:

— Կարելի է խօսել նրա հետ, — հարցրեց հիւրը, — մէկ հարց ու փորձ անեմ նրա կեանքի մասին:

— Ինչի չէ, կարելի է, — ասաց տանտէրն և ձայն տուեց, — Բաբա (բաշկիրների լեզուով նշանակում է պապի), արի կուծիս խմիր ու պառաւին էլ կանչիր»:

Իլեասը ներս եկաւ կնոջ հետ, բարևեց հիւրերին ու տանտիրոջը, աղօթք ասաց ու ծնկների վրայ չոքեց դռան մօտ, իսկ նրա կինն անցաւ վարագոյրի ետևն ու նստեց տանտիրուհու կողքին:

Իլեասին մի թաս կուծիս տուին: Իլեասը նորից բարևեց հիւրերին ու տանտիրոջը, գլուխ տուեց նրանց, մի քիչ խմեց ու վայր դրեց թասը:— Հը, պապի, — ասաց նրան հիւրը, — կարծում եմ, տխրում ես մեզ մտիկ տալով ու միտդ բերելով առաջուայ ապրուստդ. երևի չես մոռանում, թէ առաջ ինչ բաղդի մէջ էիր, իսկ հիմա ինչ դառն օրեր ես քաշում»:

Իլեասը ծիծաղեց քթի տակ ու ասաց. «Թէ որ քեզ ասեմ բաղդի ու անբախտութեան մասին՝ դու չես հաւատայ. աւելի լաւ է հարցրու իմ պառաւին. նա կնիկմարդ է. ինչ որ սրտումն ունի՝ էն էլ խօսում է բերանը. նա քեզ ամբողջ ճշմարտութիւնն այդ բանի մասին կասէ»: Հիւրը դարձաւ վարագոյրի կողմը ու ասաց. «Ապա ասա տեսնենք, տատի, ի՞նչ ես մտածում դու առաջուայ բախտաւորութեան ու հիմիկուայ դարդի մասին»: Բւ Շամ-Շեմագին ասաց վարագոյրի ետևից. «Այ թէ ինչ եմ մտածում. 50 տարի մենք ապրում էինք ծերունու հետ՝ բաղդ էինք փնտրում ու չէինք գտնում. միայն հիմի, երբ երկրորդ տարին է գնում ահա, որ մենք ամեն բան կորցրել ենք ու ապրում ենք ուրիշի մօտ, իբրև մշակ,

նոր իմացանք իսկական բաղդաւորութիւնն և մեզ էլ ուրիշ բաղդ հարկաւոր չէ»:

Հիւրերը զարմացան. զարմացաւ և տանտէրը, տեղից մինչև անգամ վեր կացաւ, վարագոյրը յետ քաշեց, որ տեսնի պառաւի երեսը: Պառաւը կանգնել էր, թևերը ծալել, ծիծաղում քթի տակ ու նայում էր ծերունուն: Ծիծաղում էր քթի տակ և ծերունին: Պառաւը նորից ասաց. «Ես հանաք չեմ անում. ուղիղ եմ ասում. կէս դար երջանկութիւն էինք փնտռում և քանի հարուստ էինք, միշտ էլ չէինք գտնում. հիմի ոչինչ չէ մնացել. մտել ենք ուրիշի մօտ ծառայ, այնպիսի երջանկութիւն ենք գտել, որ աւելի լաւը չենք էլ ուզում»:

— Բայց ինչո՞ւ մէջն է հիմի ձեր երջանկութիւնը:

— Այ ինչու մէջ. երբ որ մենք հարուստ էինք՝ ծերունու հետ մի ժամ դադար չունէինք, ոչ խօսել կարող էինք, ոչ հոգու վրայ մտածել, ոչ Աստծուն աղօթք անել. էնքան հոգս կար, որ ժամանակ չէր մնում: Մէկ տեսնես հիւրեր էին գալիս, արի հիմի հոգս քաշէ, թէ ում ինչով պատւես ու ինչ ընծայ տաս, որ մարդիկ չը բամբասեն: Մէկ, հիւրերը որ գնացին, ուրիշ բանի վրայ հոգս քաշէ—մտիկ տուր մըշակներին. նրանցն էն է, որ հանգստանան ու լաւ ուտեն, իսկ մենք աշխատում էինք, որ մերը չը կորչի ու, ի հարկէ, մեղք էինք գործում: Մէկ հոգս էինք քաշում, թէ չը լինի գայլը պատառէ քուռակին կամ հորթին, չը լինի գողերը փախցնեն ձիերի ջոկը: Պառկում էինք քնելու—քներս չէր տանում, մտածում էինք, չը լինի ոչխարները կոխկրտեն գառներին: Գընում էինք, գիշերը ման գալիս. հէնց որ մի քիչ հանգրտանում էինք՝ նոր հոգս էր առաջ գալիս, ինչպէս

անենք, որ անասունների կերը ձմեռը չը պակասի: Իեռ էդ ոչինչ. ծերունու հետ անգամ մենք հաշտ ու բարիչ չէինք կարողանում ապրել. նա ասում էր էսպէս պէտք է անել, իսկ ես ասում էի, թէ չէ, էսպէս, ու սկսում էինք անպատուել իրար, էլի մեղք էինք գործում: էսպէս մենք ապրում էինք մէկ հոգսից մինչև միւսը, մէկ մեղքից մինչև միւս մեղքն ու լաւօր չէինք տեսնում:

— Իսկ հիմի՞:


— Հիմի մենք ծերունու հետ միասին վեր ենք կէնում, հաշտ ու սիրով իրար հետ զրոյց ենք անում — ոչ վիճելու բան ունենք, ոչ հոգալու. մեր բանն էն է, որ տանտիրոջը ծառայենք: Աշխատում ենք, ինչքան ոյժերս կը պատէ. աշխատում ենք ուրախութեամբ, այնպէս որ տանտիրոջ ոչ թէ վնաս, այլ օգուտ լինի: Աշխատանքը պրծնում, գալիս ենք — ճաշ կայ, իրիկնահաց կայ, կուսիս կայ: Յուրտ է՝ աթար ենք վառում, տաքանում, մուշտակ ունենք՝ հագնում ենք: Հիմի ժամանակ ունենք համ զրոյց անելու, համ հոգու վրայ մտածելու, համ Աստծուն աղօթք անելու: Յիսուն տարի բաղդ էինք փնտռում, հիմի ենք միայն գտել:

Հիւրերը ծիծաղեցին:

Եւ Իլեասն ասաց. «Մի ծիծաղիք, եղբայրներ, դա հանաք բան չէ, այլ մարդկային կեանք: Մենք էլ պառաւի հետ միասին յիմար էինք ու լաց էինք լինում առաջ, որ հարստութիւններս կորցրինք. հիմա Աստուած յայտնեց մեզ ճշմարտութիւնը և մենք ոչ մեր գուարձութեան, այլ ձեր բարիքը ցանկանալով յայտնում ենք ձեզ»:

Մօլլէն վրայ բերեց. «Խելօք խօսքեր են. Իլեասն

իսկական ճշմարտութիւնն ասաց. էդ բանը գրքի մէջ
էլ է գրած»:
Հիւրերը զազարեցին ծիծաղելուց ու մտածման
մէջ ընկան:



ԻՆՉՈՎ ԵՆ ՄԱՐԴԻԿ ԿԵՆԴԱՆԻ



ի կօշկակար իր կնոջ ու երեխաների հետ ապրում էր գիւղացու մօտ, ինչպէս արնկեց: Նա ոչ սեփական տուն ունէր, ոչ հող. իր ու իր ընտանիքի միակ ապրուստը կօշկակարի աշխատանքն էր: Հացը թանկ էր, աշխատանքը՝ էժան. ինչ որ ընկնում էր ձեռքը՝ այն էլ ուտում էր: Կօշկակարն ու կինն երկուսով մէկ մուշտակ ունէին. նա էլ մաշուել, թել ու դերձան էր կարել: Երկրորդ տարին էր, որ կօշկակարը փող էր հաւաքում ոչխարի մորթի առնելու մուշտակի համար:

Աշունքուայ դէմ կօշկակարը վերջապէս կարողացաւ մի քիչ փող մօտ անել, — երեք մանէթ թուղթ փող պահած էր կնոջ սնտուկի մէջ, իսկ հինգ մանէթ բասն կոպէկ էլ ստանալիք ունէր գիւղացիներից:

Առաւօտուանից կօշկակարը պատրաստուեց գիւղամէջ գնալու, որ մուշտակ առնի: Շապկի վրայից հագաւ կնոջ բամբկուն բաձկոնակը, վերևից՝ մահուդէ արխալուղը, երեք բուբլի թուղթ փողը դրեց գրպանը, մի ճիպոտ կոտրեց ու ձեռքն առաւ, իբրև գաւազան և նախաձաշիկից յետոյ վեր կացաւ գնաց: Նա մտածում էր. «Կը ստանամ հինգ մանէթս գիւ-

դացիներին, վրէժն էլ իմ երեք մանէթը կը դնեմ ու ոչխարի մորթի կառնեմ մուշտակի համար»:

Կօշկակարը հասաւ գիւղամէջ, գնաց մի գիւղացու մօտ—տանը չէր. կինը խոստացաւ մի շաբաթուայ մէջ մարդու հետ ուղարկել փողերն ու ոչ մի կոպէկ չը տուեց. գնաց ուրիշ գիւղացու մօտ—նա սկսեց երգուել, թէ փող չունի, միայն քսան կոպէկ տուեց կօշիկները կարկատելու համար: Կօշկակարն ուզեց ապառիկ վերցնել ոչխարի մորթին, բայց մորթեվաճառը չը հաւատաց նրան ու ապառիկ ապրանք բաց չը թողեց:

—Փողերը բեր, —ասաց,—յետոյ ջոկիր, որը սիրտդ կուզէ. թէ չէ մենք շատ լաւ գիտենք ինչ ասել է ապառիկ ապրանք տալ:

Այսպիսով կօշկակարն ոչ մի գործ չը կարողացաւ կատարել. միայն քսան կոպէկ ստացաւ կարկատանի համար ու մի գիւղացուց թաղիքեայ հին կօշիկներ վերցրեց բոլորքը կաշի կարելու:

Կօշկակարը շատ մորմոքաց. ստացած քսան կոպէկով էլ արող խմեց ու դարձաւ տուն առանց մուշտակի: Առաւօտեան, երբ դուրս եկաւ տանից, եղանակը ցուրտ թւաց, բայց երբ արողը խմեց, առանց մուշտակի էլ տաքացաւ: Կօշկակարը տուն էր գնում, ձեռքի փայտով սառած կոշտերին խփում, իսկ միւս ձեռքով կօշիկներն էր թափ տալիս ու ինքն իրան խօսում:

«Ես, —ասում էր նա ինքն իրան,—առանց մուշտակի էլ տաք եմ: Խմեցի մի-երկու թաս՝ հիմի բոլոր երակներս մէջ պտոյտ է գալիս: Էլ ինչ մուշտակ է պէտք: Գնում եմ ինձ համար՝ ցաւս ու դարդս մոռացած: Այ թէ ինչպիսի մարդ եմ ես: Ի՞նչ

ինչ. ես առանց մուշտակի էլ կապրեմ. թէկուզ իսկի էլ չը լինի, իմ պէտքս չէ: Բայց մէկ բան կայ—կնիկարմատը կը տխրի: Մէկ էլ որ մարդու սրտին դիպչողական բան է—դու աշխատանք ես քաշում ուրիշի համար, իսկ նա քեզ քթից բռնած ման է ածում: Կաց դու հիմի, թէ որ փողերը չես բերի՝ ես քո հագիդ շապիկը կը հանեմ. Աստուած վկայ, կը հանեմ. թէ չէ՝ էս ի՞նչ բան է: Մէկ-մէկ աբասով է տալիս: Է՛, մէկ աբասով ի՞նչ կարող ես անել. մէկ բան—կուլտալ մէկ-երկու թաս: Ասում է՝ պէտք ունիմ: Է՛, լաւ, դու պէտք ունիս, ես չունիմ: Դու դեռ տուն ունիս, տաւար ունիս, հող ունիս, ամեն բան ունիս, իսկ ես էս եմ ու կամ. դու քո տանու հացն ունիս, իսկ ես հացը փողով եմ առնում. որտեղից ուզում ես ճարիր ու շաբաթական միայն հացի համար երեք մանէթ հանիր գրպանիցդ: Տուն ես գնում—հացը վերջացել է—էլի մանէթ ու կէս ցնձա՛: Դէ, որ էդպէս է՝ սուր իմ փողերս է՛:

Կօշկակարը, ճանապարհի ծռուելու տեղում, մօտեցաւ մի մատուռի. նայեց, տեսաւ, որ մատուռի ետեր ինչ-որ մի բան սպիտակին է տալիս: Մութն արդէն ընկնում էր. կօշկակարը, աչքերը չորս արած, մտիկ է տալիս—էլի չէ կարողանում լաւ տեսնել ու իմանալ, թէ ինչ բան է: «Էդպիսի քար, —մտածում է նա,—էստեղ չը կար: Տաւար է: Տաւարի նման չէ: Թէ՛ գլխին մտիկ տաս, մարդու երեսարք ունի, բայց շատ է սպիտակ: Մէկ էլ որ՝ մարդն էստեղ ի՞նչ բան ունի»:

Աւելի մօտեցաւ, տեսաւ, որ լաւ երևում է: Չըրանք է ինչ է: Իսկ որ մարդ է, կենդանի թէ մեռած՝ տիկոր նստել է, գլուխը դրել մատուռի պատին ու

ժամ չէ գալիս: Կօշկակարը զարհուրեց: «Ով որ են՝ սպանել են մարդուն,—մտածեց նա իր մտքում,— հանել են հագի շորերն ու թողել էստեղ գնացել: Որ մօտենաս՝ յետոյ էլ օձիք թափ տալ չես կարողանայ»:

Ու կօշկակարը մօտից անցկացաւ: Երբ անցաւ մատուռի ետևը՝ մարդն այլ ևս չերևաց: Մի քիչ էլ առաջ գնաց, յետ նայեց, տեսաւ, որ մարդը մատուռից հեռացել, շարժվում է ու կարծես մտիկ է տալիս: Կօշկակարն աւելի վախեցաւ: «Մօտենամ, թէ անցնեմ,—մտածում էր նա ինքն իրան,—թէ մօտենամ՝ չը լինի՞ մի վատ բան դուրս գայ. ո՞վ է իմանում ինչ մարդ է. թէ լաւ մարդ է, ի՞նչ բան ունի էստեղ: Վայ թէ մօտենամ, վեր թռչի տեղից ու բկիցս բռնէ. էլ ձեռքից ողջ չեմ պրծնի: Թէ որ չը խեղդէ էլ, արի գլուխդ ցաւի մէջ գցիր: Ի՞նչ անեմ ես տրկլոր մարդուն: Խօ չեմ կարող վրայիցս հանել ու վերջին շորս նրան տալ: Տէր, դու փրկիր ու ազատիր եկած փորձանքից»:

Ու կօշկակարն արագացրեց քայլերը: Նա արդէն սկսել էր հեռանալ մատուռից, որ նրա խիղճն սկսեց բողոքել:

Կօշկակարը կանգ առաւ ճանապարհին:

—Էդ ի՞նչ ես անում դու, Սեմեօն,—սկսեց նա ինքն իրան խօսել,—մարդը փորձանքի է հանդիպել ու մեռնում է, իսկ դու վախենում ես ու կողքովն անցնում: Թէ՛ շատ ես հարստացել: Վախենում ես, որ հարստութիւնդ թալանեն: Վայ, Սիմիկ, արածդ բանի նման չէ:

Սեմեօնը շուռ եկաւ ու գնաց մարդու կողմը:



II.

Սեմեօնը մօտեցաւ մարդուն, նայեց ու տեսաւ, որ ջահէլ առողջ, մարդ է, մարմնի վրայ ձեռի ու բաշի նշաններ չը կան. միայն, երևում է, սաստիկ մրսած ու վախեցած է. նրստել է պատին յենուած ու չէ նայում Սեմեօնին, կարծես այնքան թուլացել է, որ գլուխը չէ կարողանում վեր բարձրացնել: Սեմեօնը կիպ մօտեցաւ մարդուն և նա կարծես յանկարծ զարթնեց, գլուխը շուռ տուեց, աչօերը բացեց ու նայեց Սեմեօնին: Սեմեօնը վայր գցեց ձեռքի թաղիքեայ կօշիկները, գօտին քանդեց, դրեց կօշիկների վրայ, հանեց արխալուղը:

—Է՛, լաւ, էլ ի՞նչ խօսելու բան կայ,—ասաց,— շուտ, հագիր, ապա:

Սեմեօնը բռնեց մարդու թևից, սկսեց վեր հանել: Մարդը վեր ելաւ: Ու Սեմեօնը տեսաւ, որ նրա մարմինը քնքոյշ ու մաքուր է, ձեռքն ու ոտքը բանի երես չեն տեսել և դէմքն էլ քաղցր ու գրաւիչ: Սեմեօնն արխալուղը գցեց նրա ուսերին—նա չը կարողացաւ թևերը հագնել: Սեմեօնը թևերը ներս կոխեց, հագցրեց, արխալուղի փէշերը վրայ քաշեց ու գօտին էլ կապեց վրայից:

Սեմեօնը մէկ հասնեց պատառոտած գլխարկը, ուզում էր դնել նրա գլուխը, բայց տեսաւ, որ իր գրլուխը մրսում է: «Իմ գլուխս,—մտածեց նա,—տրկլոր է, իսկ նրա մազերն երկար ու խուճուճ են»: Նորից գլխարկը դրեց գլուխը: «Աւելի լաւ կը լինի կօշիկները հագցնեմ»:

Սեմեօնը նստեցրեց մարդուն ու թաղիքեայ կօշիկները հագցրեց ոտները:

Հագցրեց ու ասաց.—

—Է՛, էգպէս, եղբայր. ապա մէկ ժաժ տուր ջանդ ու տաքացիր: Իսկ էդ գործերն սուանց մեզ էլ կը քննեն: Կարո՞ղ ես ման գալ:

Մարդը կանգնել, քաղցր աչքերով մտիկ էր տալիս Սեմեօնին, բայց ոչ մի խօսք չէր կարողանում հանել բերանից:

—Ինչի՞ չես խօսում: Ո՞ւ ամբողջ ձմեռն էստեղ ֆնալու չենք. պէտք է տուն գնալ: Ապա՛, առ իմ մահակս, յենուիր, թէ որ թուլացել ես: Մէկ թափ տուր ջանդ:

Մարդն սկսեց գնալ. նա գնում էր թեթև քայլերով ու յետ չէր ընկնում Սեմեօնից:

Նրանք գնում էին միասին ու Սեմեօնը ճանապարհին հարցրեց.

—Ումանցի՞ց ես, բարեկամ:

—Ես էստեղացի չեմ:

—Էստեղացիներին ես ճանաչում եմ. բայց ինչպէս եղաւ, որ ընկար էստեղ, մատուռի մօտ:

—Չեմ կարող ասել:

—Երևի, մարդիկ փորձանք բերին գլխիդ:

—Ոչ ոք իմ գլխին փորձանք չէ բերել. ինձ Աստուած է պատժել:


—Յայտնի բան է, որ Աստուած. բայց ինչ որ էլ լինի, մի տեղ պէտք է, որ մարդ սթարուի: Դու ձեր ես ուզում գնալ:

—Ինձ համար մէկ է, ուր էլ գնամ:

Սեմեօնը զարմացաւ: Նման չէ լօթի-փօթի մարդու. խօսեաձքն էլ անուշ է, բայց չէ ասում թէ ով է: Ու Սեմեօնը մտածում է—ով է իմանում, թէ ինչեր կարող են զալ մարդու գլուխը:

—Է՛, ի՞նչ անենք. գնանք մեր տուն. գոնէ մի քիչ կը հանգստանաս:

Սեմեօնը մօտենում էր իր տանը. օտարականն էլ գնում էր հետը. յետ չէր ընկնում նրանից: Քամի բարձրացաւ, Սեմեօնի շապկի տակն անցաւ. նա ըսկըսեց մրսել ու հարբածութիւնն անցաւ: Նա գնում էր, քթով մշմշում, փաթաթվում կնոջ բաճկոնակի մէջ ու մտածում. «Այ քեզ մուշտակ. գնացի մուշտակ առնելու, առանց արխալուղի տուն եմ դառնում ու մի տկուրի էլ հետս եմ տանում: Չի գովի Մատրեօնան ինձ էդ բանի համար»: Եւ հէնց որ միտն էր բերում Մատրեօնային՝ նրա սիրտը տխրում էր. բայց որ նայում էր օտարականին ու յիշում, թէ ինչ աչքերով նա մտիկ տուեց իրան մատուռի մօտ, իսկոյն նրա սիրտն ուրախանում էր:



III.

Սեմեօնի կինը վաղ վերջացրեց իր գործերը: Փայտ կոտորեց, ջուր բերեց, երեխաներին կերակրեց, ինքն էլ նախաճաշեց ու մտածման մէջ ընկաւ: Նա մտածում էր, թէ երբ հաց թխէ— այսօր թէ վաղը: Հացի ֆնացած կտորը բաւական մեծ էր:

«Եթէ Սեմեօնը,— մտածում էր նա,— էնտեղ կը ճաշէ ու իրիկնահացի ժամանակ էլ շատ հաց չի ուտի», էգուց կը բաւականանայ»:

Մատրեօնան շուռ տուեց ձեռքի մէջ հացի մը— նացած կտորը, դէս ու դէն արեց ու վճռեց. «էսօր հաց չեմ թխի. ալիւրն առանց էն էլ մէկ անգամ թխելու հազիւ է ֆնացել: Մինչև ուրբաթ օրը քաշ տանք մի կերպով»:

Մատրեօնան հացը պահեց ու նստեց սեղանի մօտ՝ մարդու շապկին կարկատան գցելու: Նա կարում էր ու մտածում մարդու մասին, թէ ինչպէս նա ոչխարի մորթի կաննի մուշտակի համար:

«Չը լինի՞ թէ մորթեվաճառը խաբէ նրան. շատ միամիտն է իմ մարդս: Ինքն ոչ ոքի չի խաբի, բայց նրա գլուխը փոքրիկ երեխան էլ կարող է տկլոգել: Ութը մանէթը քիչ փող չէ. լաւ մուշտակ կարելի է կարել տալ. թէև ոչ քերթած ու իստակած, բայց էլի

լաւը կը լինի: Անցած ձմեռ ինչպէս էինք չարչարվում առանց մուշտակի: Ոչ գետը կարողանում էի գնալ, ոչ էլ ուրիշ տեղ: Թէ չէ անա, ինքը տանից դուրս է գնացել ու ինչ ունինք-չունինք վրէն է քաշել. ինձ ոչինչ չէ ֆնացել հագնելու: Վաղ չը գնաց տանից, բայց էլի ժամանակ է տուն դառնալու: Չը լինի թէ կոնծել սկսէ իմ սիրունիկս»:

Հէնց այս էր մտածում Մատրեօնան, որ պատըշգամբի սանդուղքներից ճոճոց լսուեց ու մի մարդ ներս մտաւ: Մատրեօնան ասեղը շուլալեց ու դուրս եկաւ հաշտը: Նայեց տեսաւ, որ մտնողներն երկու հոգի են— Սեմեօնն և նրա հետ մի ինչոր գիւղացի՝ գլխաբաց ու թաղիքեայ կօշիկներով:

Մատրեօնան իսկոյն առաւ արաղի հոտը. որ փրչում էր մարդուց: «Է՛, ուրեմն կոնծած է»,— մտածեց նա: Ու երբ տեսաւ, որ արխալուղը վրէն չէ, մենակ բաճկոնակն է հագին, ձեռքին ոչինչ չունի ու ոչինչ չէ խօսում և քաշվում է, Մատրեօնայի սիրտը քիչ ֆնաց արաքէր: «Ոմել է փողերը»,— մտածեց նա, — քէֆ է արել մի ինչ-որ լօթու հետ ու դեռ էդ հէրիք չէ, վերցրել լօթուն, հետն էլ տուն է բերել»:

Մատրեօնան ճանապարհ տուեց նրանց, որ անցնեն, ինքն էլ ետևներից ներս մտաւ: Մտիկ տուեց, տեսաւ, որ եկողն օտար մարդ է. ջահէլ, լղար, վըրայի արխալուղն էլ իրանցն է: Արխալուղի տակ շապկի չէ երևում. գլխարկ չը կայ գլխին: Մտաւ ու կանգնեց. ոչ շարժվում է, ոչ աչքերը բարձրացնում: Մատրեօնան մտածեց. «Լաւ մարդ չէ, վախենում է»:

Մատրեօնան յօնքերը կախեց, քաշուեց վառարանի մօտ և սկսեց նայել, թէ ինչ պիտի անեն նրանք:

Սեմեօնը վեր առաւ գլխարկը, նստեց թախտի վրայ, իբր թէ ամենևին չի էլ խմել:

—է՛, բեր, իրիկնահաց գցիր, Մատրեօնա:

Մատրեօնան ինչ-որ բան փնթփնթաց քթի տակ ու տեղից չը շարժուեց: Երբեմն մէկին էր մտիկ տալիս, երբեմն միւսին և տանում-բերում էր գլուխը: Սեմեօնը տեսաւ, որ կինը բարկացած է, բայց ի՞նչ անէր. այնպէս ցոյց տուեց, որ իբր չէ նկատում ու բռնեց օտարականի ձեռքից:

—Նստիր,—ասաց,—եղբայր, հաց ուտենք:

Օտարականը նստեց թախտի վրայ:

—Բան չէս եփել, ի՞նչ է, ա՛ կնիկ:

Մատրեօնան բորբոքուեց:

—Եփել եմ, բայց ո՛չ քեզ համար: Տեսնում եմ, որ դու խելքդ էլ ես խմել: Գնացիր, որ մուշտակ բերես, առանց արխալուղի վերադարձար ու հետդ էլ մի տկուր թոկից փախածի բերիր: Ես հարբեցողների համար իրիկնահաց չունիմ:

—Հերիք է, Մատրեօնա, ինչ ես անմիտ-անմիտ լեզուդ տլտլացնում: Առաջ մէկ հարցրու, թէ բերածս ինչ մարդ է:

—Ձէ, դու մէկ ինձ ասա, ի՞նչ արիր փողերը:

Սեմեօնը ձեռքը տարաւ գրպանը, հանեց թուղթ փողն ու բաց արեց:

—Փողերը այ՛, տեսնո՞ւմ ես, իսկ Տրիֆօնը չը տուեց. խոստացաւ վաղը տալ:

Մատրեօնան աւելի ևս փրփրեց. մուշտակ չէ առել ու վերջին արխալուղը հագցրել է մի ինչ-որ տկուրի և հետը տուն բերել:

Մատրեօնան ձեռքը զցնեց սեղանին, վերցրեց փողն ու տարաւ պահելու:

—Ես իրիկնահաց չունեմ. ամեն մի տկուր հարբեցողի ես չեմ կարող կշտացնել:

—է՛հ, Մատրեօնա, լեզուդ մէկ քեզ քաշիր: Առաջ մէկ լսիր, թէ ինչ ես ասում:

—Հարբած յիմարից խելօք բաներ կը լսեմ, չէ՛: Զուր չէր, որ ես չէի ուզում քեզ նման հարբեցողի առնել: Մէրս ինձ քաթաններ տուեց՝ ծախեցիր, փորրդ ածեցիր. գնացիր մուշտակ գնելու—էլի փողերը խմեցիր:

Սեմեօնն ուզում էր հասկացնել կնոջը, որ միայն 20 կոպէկի է խմել. ուզում էր ասել, թէ որտեղ է գտել մարդուն, բայց Մատրեօնան չէր թողնում նրան մի խօսք հանելու բերանից. կարկտի նման խօսքերը թափում էր իրար ետևից: Ինչ որ տաս տարի առաջ պատահել էր, էն էլ յիշեց:

Մատրեօնան խօսեց, խօսեց, վազեց Սեմեօնի մօտ ու բռնեց նրա թևից:

—Տուր իմ բաճկոնակս. էդ մի հատն ունեմ, էն էլ հագիցս հանեցիր ու քաշեցիր վրէդ: Տուր, ասում եմ, սատկած շուն, պրողը տեսնի երեսդ:

Սեմեօնը սկսեց հանել վրայից բաճկոնակը. մի թևը հանել էր արդէն, որ կինը քաշեց ու բաճկոնակի կարերը ճոճոացրին: Մատրեօնան վերցրեց բաճկոնակը, զցնեց գլխին ու գնաց դռան մօտ: Ուզում էր դուրս գնալ, բայց չը գնաց, կանգ առաւ. նրա սիրտը տրտաքվում էր: Բարկութիւնից ուզում էր մաղձը թափել մէկի վրայ և իմանալ, թէ ինչ մարդ է, որ Սեմեօնը առն է բերել:



IV.

Մատրեօնան կանգ առաւ ու ասաց.

—Թէ որ լաւ մարդ է, ինչի՞ է տկլոր. մինչև անգամ շապիկ չը կայ վրէն: Թէ որ դու էլ լաւ մարդ

ես ու լաւ տեղ ես գնացել, ինչի՞ չես ասում որ-տեղից ես բերել էդ գուգուած-զարդարուածին:

—Ախր ես ասում եմ, որ չես լսում: Ես տուն էի գալիս, տեսնեմ մատուռի մօտ նստել է սա տրկ-յոր ու համարեա բոլորովին սառել: Ամառ խօ չէ. տկլոր նստել կը լինի: Աստուած էր, որ ինձ տարաւ նրա մօտ, թէ չէ կը կորչէր մարդը: Է՛, ի՛նչ անենք. ի՛նչ ասես աշխարհում չէ պատահում: Հանեցի շօ-րերս, հագցրի նրան ու տուն բերի: Միրտդ հանգար-տացրու, Մատրեօնա: Մեղք է. ամենքս էլ պիտի մեռնենք:

Մատրեօնան ուզում էր մի լաւ հայհոյել, բայց մտիկ տուեց օտարականին և լռեց: Օտարականն ինչ-պէս նստել էր թախտի ծայրին, այնպէս էլ քնացել էր նստած ու չէր շարժվում տեղից: Չեռները դրել էր ծնկներին, գլուխը կախել կրծքի վրայ, աչքերը ցած գցել. դէմքի վրայ այնպիսի ցաւ էր երևում, որ կարծես մի բան խեղդում էր նրան:

Մատրեօնան որ լռեց՝ Մեմեօնն ասաց.

—Մատրեօնա, դու Աստուած չունիս:

Մատրեօնան լսեց այդ խօսքը, մտիկ տուեց օտարականին և յանկարծ նրա բարկութիւնն անցաւ: Նա հեռացաւ դռնից, մօտեցաւ վառարանի անկիւնին, հանեց իրիկնահացը: Ամանը դրեց սեղանին, ածեց մէջը թթուաջուր, հանեց հացի վերջին կտորը: Տուեց դանակ ու զգալներ:

—Ահա, կերէք:

Մեմեօնը օտարականին մօտեցրեց սեղանին:

—Առջ արի,—ասաց, զօշադ:

Մեմեօնը հաց կտրատեց, բրդեց ու նրանք սկըսեցին ուտել: Իսկ Մատրեօնան նստեց սեղանի անկիւնի մօտ, յենուեց ձեռքի վրայ ու նայում էր օտարականին:

Ու ցաւեց Մատրեօնայի սիրտն օտարականի համար և սիրեց նա օտարականին: Եւ յանկարծ օտարականն ուրախացաւ. նրա երեսը զազարեց կնճռուելուց. նա աչքերն ուղղեց Մատրեօնային ու ժպտաց:

Հաց կերան, վերջացրին. Մատրեօնան հաւաքեց սեղանն ու սկսեց հարցնել օտարականին.

—Ի՞նչ անմանցից ես:

—Ես էստեղացի չեմ:

—Բայց ի՛նչպէս ընկար էս տեղերանք:

—Չեմ կարող ասել:

—Քեզ ո՞վ թալանեց:

—Ինձ Աստուած պատժեց:

—Հէնց էդպէս տկլոր էլ պառկել էի՞ր:

—Հէնց էսպէս տկլոր էլ պառկել էի ու սառչում:

Մեմեօնը տեսաւ ինձ, ցաւեց, հանեց վրայից արխա-լուղը, հագցրեց ինձ ու ասաց, որ գամ այստեղ: Իսկ

այստեղ դու ինձ կերցրիր, խմցրիր, ցաւեցիր ինձ վրայ: Աստուած կը հատուցանէ ձեր վարձը:

Մատրեօնան վեր կացաւ, պատուհանի գողից վերցրեց Սեմեօնի հին շապիկը, հէնց այն, որ քիչ առաջ կարկատում էր, տուեց օտարականին. գտաւ վարտիք ու այն էլ տուեց:

—Սհա, հագիր, ինչպէս տեսնում եմ, դու շապիկ էլ չունես: Հագիր ու պառկիր, որտեղ սիրտդ կուզէ, թախտին կամ վառարանի վրայ:

Օտարականը հանեց արխալուղը, շապիկն հագաւ ու պառկեց թախտին: Մատրեօնան հանգրեց ճրագը, վեր առաւ արխալուղն ու գնաց մարդու մօտ: Մատրեօնան ծածկուեց արխալուղի փէշով, պառկեց, բայց չը քնեց. նրա մտքից օտարականը չէր հեռանում:

Հէնց որ յիշում էր, թէ նա հացի վերջին կտորը կերաւ և թէ վաղուայ համար հաց չը մնաց. հէնց որ յիշում էր, թէ շապիկ-վարտիքը տուեց՝ նրա սիրտը տխրում էր, իսկ երբ միտն էր բերում, թէ ինչպէս նա ժպտաց՝ տխրութիւնը մոռանում, սւրախանում էր:

Մատրեօնայի քունն երկար ժամանակ չէր տանում. Սեմեօնն ևս քնած չէր ու արխալուղն իր վրայ էր քաշում:

—Սեմեօն:

—Հ'ը:

—Հացի վերջին պատառը կերանք ու ես խմոր չեմ հունցել: Էգուց չեմ իմանում ինչ պիտի անենք: Մանամէր Մալանիայից փոխ ուզեմ, ինչ է:

—Թէ ողջ մնացինք՝ հաց կունենանք, մի վախենար:

Կինը լռեց. քիչ անցաւ նա նորից խօսեց:

—Էդ մարդն, երևում է, լաւ մարդ է, բայց

ինչու չէ ասում, թէ ով է:

—Երևի, չէ կարելի:

—Սիմիկ.

—Հ'ը:

—Մենք ուրիշներին տալիս ենք, բայց ինչու մեզ ոչ ոք չէ տալիս:

Սեմեօնը չը գիտէր, թէ ինչ պատասխանէր: «Հերիք խօսիս» — ասաց նա ու շուռ եկաւ՝ քնեց:



V.

ուաւօտեան երբ Սեմեօնը զարթնեց,
երեսաները դեռ քնած էին, իսկ
կինը գնացել էր հարեանների մօտ
հաց փոխ ուզելու: Միայն երեկուայ
օտարականն էր, որ հին շապիկ-վար-
տիքով թախտի վրայ նստել, վերև էր
նայում: Ու նրա դէմքն երեկուանից աւելի պայծառ
և ուրախ էր:

—է՛, բարեկամ,—ասաց Սեմեօնը,—փորը հաց
է ուզում, տկլոր մարմինն էլ շոր: Ապրուստ պէտք
է: Աշխատել գիտե՞ս թէ չէ:

—Ես ոչինչ չը գիտեմ:

Սեմեօնը զարմացաւ ու ասաց:

—է՛, մարդ սէր ունենայ, թէ չէ ամեն բան էլ
կարելի է սովորել:

—Մարդիկ աշխատում են, ես էլ կաշխատեմ:

—Անունդ ի՞նչ է:

—Միքայէլ:

—է, Միքէլ ջան, քո մասին ոչինչ չես ուզում
ասել—էդ քո բանն է, բայց հաց ուտել պէտք է:
Գու կանես էն, ինչ որ կասեմ—ե՞ս էլ կը կերակ-
րեմ քեզ:

—Հոգուդ արքայութիւն, իսկ ես կը սկսեմ սո-
վորել: Տոյց տուր, թէ ինչ պիտի անեմ:

Սեմեօնը վերցրեց մանածը, անցկացրեց մա-
ներին ու սկսեց ծայր շինել:

—Մտիկ տուր, դժուար բան չէ:

Միքէլը մտիկ տուեց, նոյն կերպով անցկացրեց
մատներին, իսկոյն սովորեց ու ծայր շինեց:

Սեմեօնը ցոյց տուեց նրան, թէ ինչպէս պէտք է
փրակար անել: Միքէլն իսկոյն այդ էլ հասկացաւ: Կօշ-
կակաբը ցոյց տուեց նրան, թէ ինչպէս պէտք է
անցկացնել ձարը և ինչպէս պէտք է կարել կաշու
ծալուածքը: Միքէլը դրանք էլ հասկացաւ մի անգամ
ասելուց:

Սեմեօնն ինչ բան որ ցոյց էր տալիս, նա իս-
կոյն հասկանում էր ու երբորդ օրուանից սկսեց այն-
պէս աշխատել, որ կարծես իր կեանքում միշտ կար
անելով էր մեծացել: Միքէլն աշխատում էր առանց
շիտկուելու. կերած-խմածն էլ քիչ բան էր. աշխա-
տանք չեղած ժամանակ լուում էր և շարունակ վերև
նայում: Փողոց չէր գնում, աւելորդ խօսք չէր ասում,
ոչ հանաք էր անում և ոչ ծիծաղում:

Մի անգամ միայն տեսան, որ նա ժպտաց. դա
առաջին իրիկունն էր, երբ Մատրեօնան նրան ընթրիք
տուեց ուտելու:



VI.

ը օրուայ՝ վրայ, շաբաթ շաբաթուայ
վրայ անցաւ, մէկ էլ տեսար տա-
րին բոլորեց: Միքէլն առաջուայ
պէս ապրում էր Սեմեօնի մօտ ու
աշխատում: Սեմեօնի բանուորի
համբաւը տարածուեց ամեն տեղ-
ամենքը գովում էին նրան ու
ասում, որ ոչ ոք այնպէս լաւ և
ամուր կօշիկներէջէ կարում, ինչպէս Սեմեօնի բանուոր
Միքէլը: Եւ սկսեցին մարդիկ ամեն կողմից գալ Սե-
մեօնի մօտ կօշիկներ պատուիրելու: Սեմեօնի դրու-
թիւնը քիչ-քիչ սկսեց լաւանալ:

Մի անգամ ձմեռ ժամանակ, Սեմեօնն ու Մի-
քէլը նստած աշխատում էին, երբ նրանց տանը մօ-
տենում էր երեք ձի լծած մի կառք: Նայեցին պա-
տուհանից—սայլը կանգնեց իրանց տան առաջ, մի
ջահէլ տղայ վայր թռաւ կառապանի մօտից ու դռ-
նակը բացեց: Կառքից դուրս եկաւ մուշտակը հագին
մի պարոն: Պարոնը վայր իջաւ, գնաց դէպի Սեմեօ-
նի տունն ու բարձրացաւ դռան առաջի պատշգամբը:
Մատրեօնան իսկոյն դուրս վազեց ու դուռը կրնկին
բաց արեց: Պարոնը կուացաւ, ներս մտաւ, նորից ուղ-
ղուեց. նա այնքան բարձրահասակ ու խոշոր մարդ
էր, որ գլուխը քիչ էր մնում դիպչէր առաստաղին.

իր մարմնով նա ամբողջ անկիւնը բռնեց:

Սեմեօնը վեր կացաւ տեղից, գլուխ տուեց, ու
զարմանք-զարմանք սկսեց նայել պարոնին: Այդ տեսակ
մարդիկ նա չէր էլ տեսել: Ինքը Սեմեօնը չորչրիկ
մարդ էր, Միքէլը՝ լղար, իսկ Մատրեօնան խօ բոլո-
րովին չորացրած տառեխ էր, այն ինչ այդ մարդը
կարծես ուրիշ աշխարհից լինէր—մոռութը կարմիր ու
լիքը. վիզը՝ ինչպէս գոմշի վիզ, կարծես չուգունից
թափած լինէր:

Պարոնը փռնչաց, հանեց մուշտակը, նստեց թախ-
տի վրայ ու ասաց.

—Ո՞վ է այստեղ կօշկակար վարպետը:

Սեմեօնն առաջ եկաւ:

—Ես եմ, ձերդ ազնուութիւն:

Պարոնը բղաւեց իր ծառային:

—Է՛յ, Ֆեդկա, այստեղ բեր ապրանքը:

Տղան ներս վազեց ու բերեց մի փոքրիկ կա-
պոց: Պարոնը վերցրեց կապոցը, դրեց սեղանին:

—Բաց արա:

Տղան բաց արեց:

Պարոնը մատով հրեց կաշուեղէնն ու ասաց Սե-
մեօնին.

—Դէ հիմա լսիր դու, կօշկակար: Տեսնո՞ւմ ես
այս ապրանքը:

Տեսնում եմ,—ասաց Սեմեօնը,— ձերդ ազնու-
թիւն:

—Դու հասկանո՞ւմ ես, թէ սա ինչ ապրանք է:
Սեմեօնը շօշափեց ապրանքն ու ասաց.

—Լաւ ապրանք է:

—Լաւ ապրանք է: Դու, յիմար, կեանքիդ մէջ
դեռ այսպիսի ապրանք չես տեսել: Գերմանական

ապրանք է. քսան ըուբլի է տուած:

Սեմեօնի սիրտն ահ ընկաւ:

—Ո՞րտեղ մենք պէտք է տեսած լինենք,—ասաց:

—Հը, ի հարկէ: Կարո՞ղ ես դու այս ապրանքից իմ ոտքիս կօշիկ կարել:

—Կարելի է, ձերդ ազնուութիւն:

Պարոնը բղաւեց նրա վրայ:

—Կարելի է. գիտեմ որ կարելի է. բայց դու մէկ իմացիր, թէ ում համար ես կարում եւ ինչ ապրանքից: Այնպիսի կօշիկներ կարիր, որ մի տարի դիմանան, — չը ծռուին, չը պատռուին: Կարող ես—վերցրու, կարիր ապրանքը, թէ չես կարող—մի վերցնի ու ապրանքն էլ մի կտրի: Ես քեզ առաջուց եմ ասում, թէ որ կօշիկները մի տարուց առաջ ծռուին կամ պատռուին, ես քեզ բանտ կը նստեցնեմ. իսկ եթէ չը ծռուին ու չը պատռուին մի տարուայ մէջ, աշխատանքի համար տաս ըուբլի կը տամ քեզ:

Սեմեօնը վախեցաւ ու չէր իմանում, թէ ինչ անէր: Մտիկ տուեց Միքէլին, խփեց նրան թևով ու փսփսաց.

—Վերցնեմ, ի՞նչ կասես:

Միքէլը գլխով նշան արեց, իբր թէ վերցրու:

Սեմեօնն ականջ արեց Միքէլին ու յանձն առաւ այնպիսի կօշիկներ կարել, որ մի տարի չը ծռուին ու չը պատռուին:

Պարոնը կանչեց տղային, հրամայեց ձախ ոտքից հանել կօշիկն ու ձգեց ոտքը:

—Առ չափսը:

Սեմեօնը մի թուղթ կտրեց տասն վերշոկերկաբուրեմամբ, ծալեց, հաւասարեցրեց, չորեց ծնկների վրայ, ձեռքը լաւ սրբեց գոգնոցով, որ պարոնի գուլ-

պան չը կեղտոտէ և սկսեց չափն առնել: Սեմեօնը չափեց ոտնատակը, չափեց ոտքի բարձրութիւնը, յետոյ, երբ սկսեց չափել սրունգի հաստութիւնը, թուղթը չը հասաւ: Ոտքի ձուկն այնքան հաստ էր, որ նմանում էր գերանի:

—Մտիկ արա, բուկը նեղ չը բռնես:

Սեմեօնն սկսեց ուրիշ թուղթ պատրաստել: Պարոնը նստել էր, մատներով քրքրում էր գուլպի մէջ ու նայում տան մէջ եղած միւս մարդկանց: Տեսաւ Միքէլին:

—Սա՞ ով է,—հարցրեց,—ի՞նչ է շինում քեզ մօտ:

—Դա հէնց իմ վարպետն է. նա էլ պիտի կարէ կօշիկները:

—Մտիկ արա,—ասաց պարոնը Միքէլին,—միտդ պահիր. այնպէս կարիր, որ մի տարի դիմանան:

Սեմեօնն ևս մտիկ տուեց Միքէլին. տեսաւ, որ Միքէլը չէ էլ նայում պարոնին, այլ աչքերը գցել է անկիւնին, պարոնի ետևը, ու սուր-սուր նայում է մէկին: Միքէլը նայեց, նայեց և յանկարծ ժպտաց ու զուարթացաւ:

—Դու, յիմար, ի՞նչ ես ատամներդ բաց անում: Աւելի լաւ է, մտիկ արա, որ ժամանակին պատրաստ լինեն:

—Իսկ և իսկ ժամանակին կը հասնեն, երբ որ պէտք է,—ասաց Միքէլը:

—Հա, այդպէս:

Պարոնը հագաւ կօշիկը, հագաւ և մուշտակը, լաւ փաթաթուեց ու գնաց դէպի գուռը, բայց մոռացաւ կռանալ ու գլուխը խփեց դռան վերին սեանը:

Պարոնը հայհոյանքներ թափեց բերանից, շփեց գլուխը, նստեց կառքն ու հեռացաւ:

Երբ պարոնը գնաց, Սեմեօնն ասաց.

—Այ թէ պինդ մարդ է հա՛. սրան մահակով էլ չես կարող սպանել: Դուռը կրնկահան արեց գլխով ու պէտքն էլ չէր:

—Էդ տեսակ ապրուստից ի՞նչի գէը ու կլոր չեն լինի. էնպէս պինդ է, ինչպէս երկաթ. նրան մահն էլ չի յաղթի:



VII.

Ետոյ Սեմեօնն ասաց Միքէլին.

—Աշխատանքը վեր առնելը վերցրինք, բայց չը լինի՞ թէ փորձանքի մէջ ընկնենք: Ապրանքը թանգ ապրանք է ու պարոնն էլ բարկացկոտ: Չը լինի՞ թէ սխալուենք: Ապա, առ, քո աչքերդ աւելի սուր են ու ձեռքդ էլ հիմի աւելի վարժ, բան թէ իմա. վերցրու չափսը, ձեռքը ապրանքը, իսկես էս միւս գոյգը կարեմ, վերջացնեմ:

Միքէլը հնազանդուեց. վերցրեց պարոնի ապրանքը, փռեց սեղանի վրայ, երկու տակ ծալեց, վերցրեց դանակն ու սկսեց ձևել:

Մատրեօնան մօտեցաւ նայելու, թէ ինչպէս պիտի ձևէ Միքէլը, և շատ դարմացաւ, երբ տեսաւ Միքէլի ձևելը: Մատրեօնան քչից շատից հասկանում էր կօշկակարութեան արհեստը. նա նայեց տեսաւ, որ Միքէլը կօշկակարի նման չէ ձևում ապրանքը, այլ կլոր-կլոր կտորներ է հանում:

Մատրեօնան ուզում էր ասել Միքէլին, բայց յետոյ մտածեց. — «Երևի ես չը հասկացայ, թէ ինչպիսի կօշիկներ պէտք է կարել պարոնին. Միքէլն, երևի, աւելի լաւ գիտէ. ինչ խառնուեմ գործի մէջ»:

Միքէլը ձևեց մի գոյգ, վեր առաւ ծայրն ու սկսեց կարել ոչ կօշկակարի նման երկու ծայրով, այլ մի ծայրով, ինչպէս չուստերն են կարում:

Մատրեօնան այդ բանի վրայ էլ զարմացաւ, բայց էլի չուզեց խառնուել: Իսկ Միքէլը շարունակ կարում էր: Երբ ուզում էին ճաշել, Սեմեօնը վեր կացաւ տեղից ու տեսաւ, որ Միքէլը պարօնի ապրանքից չուստեր է կարել:

Սեմեօնը զարմանքից քար կտրուեց: «Էդ ի՞նչ պէս բան է,— մտածեց նա.— Միքէլն ամբողջ տարի ինձ մօտ է ապրում, ոչ մի բանի մէջ չէ սխալուել, իսկ հիմի էս տեսակ փորձանքի մէջ զցեց ինձ: Պարօնն երկար բեկերով կօշիկներ պատուիրեց կարել, իսկ նա առանց կրօնակների ու տակի կրկնակաշու, չուստեր է կարել և ապրանքը փչացրել: Ես ի՞նչպէս պիտի ազատուեմ հիմի պարօնի ձեռքից: Էս տեսակ ապրանք չեմ էլ ճարի»:

Ու նա ասաց Միքէլին.

— Դու էդ ի՞նչ բերիք իմ գլխին, ախպէր ջան: Խօ ինձ սպանեցիր: Չէ որ պարօնը կօշիկներ պատուիրեց, իսկ դու ի՞նչ ես կարել:

Հէնց Սեմեօնը նոր էր սկսել յանդիմանել Միքէլին, որ թը'խկ, թը'խկ, դուռն սկսեցին ծեծել: Պատուհանից նայեցին— մի ինչ-որ ձիաւոր էր եկել ու ձին կապում էր: Դուռը բաց արին, տեսան՝ այն տղան է, որ պարօնի հետ եկել էր:

— Բարև:

— Բարև: Հը, ի՞նչ կայ:

— Ա՛յ ինչ. տիկինն ուղարկեց կօշիկների համար:

— Կօշիկների համար ի՞նչ:

— Ի՞նչ պիտի լինի. էլ կօշիկներ հարկաւոր չեն պարօնին. ձեր չարը տարաւ:

— Ի՞նչ ես ասում:

— Էստեղից որ դուրս եկաւ՝ տուն չը հասաւ. հէնց կառքումն էլ մեռաւ: Կառքը կանգ առաւ տան առաջ, մարդիկ դուրս եկան նրան վէր բերելու, իսկ նա, ինչպէս փալաս ընկած էր կառքի մէջ ու արդէն մեռել, փէտացել էր, հագիւ հագ դուրս քաշեցինք կառքից: Տիկինն ինձ ուղարկեց ձեզ մօտ ու ասաց. «Յնա՛, ասա՛ կօշկակարին, թէ ձեզ մօտ մի պարօն է եկել, կօշիկներ պատուիրել ու ապրանքն էլ թողել է. ասա՛, որ էլ կօշիկներ պէտք չեն, թող էդ թողած ապրանքից շուտով չուստեր կարեն մեռելի համար: Համ էլ սպասիր,— ասում է,— մինչև որ կարեն ու չուստերը հետդ բեր»:

Միքէլը վերցրեց սեղանի վրայից ապրանքի կրտորանքը, կլորեց, յետոյ վեր առաւ պատրաստի չուստերը, մէկը միւսին խփեց, գոգնոցով սրբեց ու տակեց տղային: Տղան վերցրեց չուստերը:

— Մնաք բարով, վարպետներ: Աստուած ձեր բանն աջողէ:



VIII.

նցաւ էլի մի տարի, երկու տարի— դեռ Միքէլը ապրում էր Սեմեօնի մօտ. արդէն վեցերորդ տարին էր գնում, որ նա ապրում էր առաջուայ նման: Ոչ մի տեղ չէր գնում, աւելորդ բան չէր խօսում, ամբողջ վեց տարուայ մէջ միայն երկու անգամ էր ժպտացել. մէկ անգամ, երբ Մատրեօնան առաջին իրիկունն ընթրիք տուեց նրան ուտելու, միւս անգամ— երբ պարօնը կօշիկներ էր պատուիրում: Սեմեօնի ուրախութեանը չափ չը կար, երբ նայում էր իր բանուորին: Հիմա նա էլ չէր հարցնում Միքէլին, թէ որտեղից է մի բանից էր միայն վախենում Սեմեօնը— որ Միքէլը դուրս չը գայ իր մօտից:

Մի անգամ նրանք նստած էին տանը: Մատրեօնան չուգունէ ամանները դնում էր վառարանի մէջ, իսկ երեխաները վազվզում էին թախտերի վրայ ու պատուհաններից դուրս նայում: Սեմեօնը կաշուի ծալքն էր կարում պատուհանի մօտ, իսկ Միքէլը միւս կօշիկի կրունկն էր կպցնում:

Տղան թախտի վրայով վազեց Միքէլի մօտ, յենուեց նրա ուսին ու սկսեց նայել պատուհանից:

—Միքէլ քեռի, մտիկ արա. վաճառականի կինն

աղջիկների հետ ասես թէ մեզ մօտ են գալիս. աղջիկներից մէկն էլ կաղ է:

Տղան այդ որ ասաց, Միքէլը վայր դրեց ձեռքի բանը, շուռ եկաւ պատուհանի կողմն ու սկսեց նայել:

Սեմեօնը զարմացաւ: Միքէլն իսկի սովորութիւն չունէր պատուհանից նայելու, իսկ հիմա վրայ էր ընկել ու մի ինչ-որ բանի մտիկ էր տալիս: Սեմեօնն ինքն էլ նայեց պատուհանից. տեսաւ, որ ուղիղ մաքուր հագնուած մի կին է գալիս դէպի իրանց տունն ու ձեռքերից բռնած բերում է երկու աղջիկ՝ փոքրիկ մուշտակներ հագցրած ու խաւոտ թաշկինակներով գլուխները փաթաթած. երկու աղջիկն էլ այնպէս իրար նման, որ, կարծես, մի խնձոր երկու կէս արած լինեն. միայն թէ մի աղջկայ ոտքը փխսուած էր, կաղին էր տալիս:

Կինը բարձրացաւ պատշգամբը, մտաւ հաշտը, շօշափեց դուռը, քաշեց ախից ու բացեց. առաջ թողեց, որ փոքրիկ աղջիկները ներս մանեն, յետոյ էլ ինքը մտաւ սենեակ:

—Բարև, վարպետներ:

—Համեցէք, նստեցէք: Ի՞նչ կը կամենայիք:

Կինը նստեց սեղանի մօտ: Աղջիկները կուչ եկան, կպան նրա ծնկներին— քաշվում էին օտար մարդկանցից:

—Ա՛յ, էս աղջիկներին զարնան համար կաշուէ կիսակօշիկներ:

—Ի՞նչ կը լինի որ. կարելի է. մենք էդպէս պատիկներ չենք կարել. բայց էլի կարող ենք: Կարելի է կարերով շինել, կարելի է շուռ տուած կարել քաթանի աստառով: Ա՛յ, Միքէլը վարպետ է էդ բաների մէջ:

Սեմեօնը շուռ եկաւ, նայեց Միքէլին ու տեսաւ, որ Միքէլը թողել է աշխատանքն և նստած տեղից անթարթ նայում է աղջիկներին:

Ու Սեմեօնը զարմացաւ Միքէլի վրայ: Ուղիղ է, աղջիկները գեղեցիկ էին—սն աչք ու ունքով, փափուկ, կարմրաթշիկ, մուշտակներն ու գլխակապերը՝ լաւ, բայց էլի Սեմեօնը չէ կարողանում հասկանալ, թէ ինչու է Միքէլն այնպէս սուր-սուր նայում նրանց, կարծես թէ աղջիկները ծանօթ լինեն նրան:

Սեմեօնը զարմացաւ ու սկսեց կնոջ հետ խօսել—բարիչել: Բարիչեց, յետոյ պատրաստեց չափսի թուղթը: Կինը գոգն առաւ կաղլիկ աղջկան ու ասաց.

—Մ, սրանից երկու չափս առ. կաղ ոտքին մէկ հատ կիսակօշիկ կարիր. իսկ ուղիղ ոտքին—երեք: Նրանց ոտները մէկ տեսակ են. մէկը միւսի չափ է. նրանք երկուորեակ են:

Սեմեօնը չափն առաւ ու ասաց կաղի մասին.

—Ինչից է պատահել դրան. ինչպէս լաւ աղջիկ է. էդպէս է ծնուել:

—Ձէ, մայրն է արել:

Մէջ մտաւ Մատրեօնան. ուզում էր իմանալ, թէ դա ինչ կնիկ է և ում երեխաներն են:


—Իսկ դու դրանց մայրը չե՞ս, ի՞նչ է,—հարցրեց նա:

—Ես սրանց մայրը չեմ և ոչ էլ ազգական, քուրիկ ջան, իմ ոչ մի բանս էլ չեն—հոգեորդիներ են:

—Քո երեխէքդ չեն, բայց ի՞նչպէս սիրում ես դրանց:

—Ի՞նչպէս չը սիրեմ, ես նրանց երկուսին էլ իմ կաթովս եմ պահել, մեծացրել: Ես էլ մի հատ երեխայ ունէի, բայց Աստուած չը կամեցաւ, ձեռքիցս առաւ: Նրան էնքան չէի սիրում, ինչքան սրանց:

—Բայց ո՞ւմ աղջիկներն են:



IX.

Ե ինն սկսեց զրոյց անել ու պատմեց.

—Վեց տարի կայ,—ասաց նա,—որ մի շաբաթուայ մէջ այս երկուսը համ հօրից, համ մօրից որբ մնացին. հօրն երեքշաբթի թաղեցին, իսկ մայրն ուրբաթ օրը մեռաւ: Որբերը հօրից երեք օրական մնացին, իսկ մայրը մի օր էլ չապրեց: Էդ ժամանակ ես ու մարդս գեղական էինք, սրանց հարեաններ՝ դուռը դռան կից: Սրանց հայրը մենակ մարդ էր, անտառում էր աշխատում: Ինչպէս էր պատահել, մի անգամ ծառը կտրելիս՝ ընկել էր նրա վրայ ու ամբողջ փորոտիքը թափել: Հէնց որ տուն բերին, նա հոգին աւանդեց, իսկ նրա կինն էդ միևնոյն շաբթին պառկեց, ջուխտով բերեց, այ, էս աղջիկներին: Մենակ պառկեց, մենակ էլ մեռաւ:

Առաւօտեան ես գնացի հարեանուհուն տեսնելու: Ներս որ մտայ՝ ի՞նչ տեսնեմ—խեղճն արդէն սառել, փէտացել էր: Ու մեռնելիս ընկել էր աղջկայ վրայ: Մ, սրան ճխտել, ոտը դուրս էր զցել: Գեղականները հաւաքուեցին—լուացին, մաքրեցին, դազող շինեցին ու թաղեցին: Մարդիկ ամեն բան արին—Աստուած բարի տայ նրանց: Աղջիկները մրնացին մենակ: Ի՞նչ անէին նրանց: Կնիկ մարդկանց մէջ մենակ ես էի, որ ծծի երեխայ ունէի: Առջնիկ

տղէս էր. ութերորդ շաբաթն էր, ինչ բերել էի: Աղ-
ջիկներին առ ժամանակ ես վերցրի ինձ մօտ: Գե-
ղականները հաւաքուեցին, մտածեցին, մտածեցին,
թէ ինչ անեն աղջիկներին, յետոյ դարձան ու ասա-
ցին ինձ. «Իո՛ւ, Մարեա, մի ժամանակ պահիր աղ-
ջիկներին քեզ մօտ, իսկ մենք էլի կը մտածենք ու
մի բան կանենք»: Իսկ ես մի անգամ ծիծ տուի էս
ուղիղ ոտք ունեցողին, բայց էն մէկելին, ճխլածին,
ծիծ տալ անգամ չուզեցի. չէի կարծում, թէ կեն-
դանի կը մնայ: Յետոյ ես ինձ ու ինձ մտածեցի. էդ
անմեղ հրեշտակն ինչի՞ պիտի չարչարուի. սիրտս
նրա վրայ էլ ցաւեց: Սկսեցի նրան էլ ծիծ տալ: Էս-
պէս իմ մէկիս վրայ աւելացան երկուսը. ու ես երե-
քին էլ ծիծ էի տալիս: Ջահէլ էի, մէջս շատ ոյժ
կար. ուտելս էլ լաւ էր: Ու Աստուած տուեց, կաթս
էնպէս շատացաւ, որ երեքն էլ ուտում, կշտանում
էին ու դեռ բերաններից վայր էր վազում: Առաջ
կերակրում էի երկուսին իրար հետ, մէկն սպասում
էր, յետոյ, երբ ուտողներից մէկն ու մէկը յետ էր
բաշվում, վերցնում էի երրորդին: Ու Աստուած կամքն
էնպէս էր, որ էս երկուսին կերակրեցի, մեծացրի,
իսկ իմս երկու տարեկան չեղած մեռաւ: Յետոյ
Աստուած էլ երեխայ չը տուեց, իսկ մեր կարողու-
թիւնն սկսեց շատանալ: Հիմի ապրում ենք էստեղ՝
Չրադացում, մի առևտրականի մօտ: Մարդուս ու-
ճիկը՝ շատ, կեանքերս՝ լաւ: Մենք ինքներս երեխայ
չունենք: Հիմի ի՞նչպէս պիտի ապրէի ես մենակ, թէ
որ էս աղջիկները չը լինէին: Ի՞նչպէս կարող եմ ես
նրանց չը սիրել: Աչքի լոյսն էլ էնպէս չեն սիրում,
ինչպէս ես սիրում եմ էս աղջիկներին: Իմ միակ
մխիթարանքս սրանք են:

Կինը կաղիկ աղջկան մի ձեռքով սեղմեց կրծ-
քին, իսկ միւսով սկսեց արտասուքը սրբել թշերից:
Մատրեօնան հոգոց բաշեց ու ասաց.

— Երևում է առածը դրուստ է ասում, թէ ա-
ռանց հօր ու մօր մարդ կապրի, բայց առանց
Աստուծոյ չի ապրի:

Այսպէս կանայք խօսում էին իրար հետ և յան-
կարծ կարծես փայլակ փայլատակեց այն անկիւնից,
ուր նստած էր Միքէլն, ու լուսաւորեց ամբողջ տունը:
Ամենքը շուռ եկան, նայեցին նրան. Միքէլը նստել,
ձեռները դրել էր ծնկներին ու վերև նայում և ժրպ-
տում էր:



X.

ինը գնաց աղջիկները հետ, Մի-
քէլն էլ վեր կացաւ թախտից,
ձեռքի բանը վայր դրեց, հա-
նեց գոգնոցը, գլուխ տուեց
Սեմեօնին ու կնոջը և ասաց.
— Ներեցէք, տանտէրեր.
ինձ Աստուած ներեց. ներե-
ցէք և դուք:

Եւ տանտէրերը տեսան, որ Միքէլից լոյս է
ձառագայթում: Սեմեօնը վեր կացաւ, գլուխ տուեց
Միքէլին ու ասաց.

— Ես տեսնում եմ, Միքէլ, որ դու հասարակ
մարդ չես, ու ես չեմ կարող քեզ գորով պահել ու
չեմ կարող քեզ հարց ու փորձ անել: Մի բան միայն
ասա ինձ. ինչո՞ւ, երբ ես գտայ ու բերի քեզ տուն,
դու ախուր էիր, իսկ երբ Մատրեօնան իրիկնահաց
տուեց քեզ ուտելու, դու մտիկ տուիր նրան ու
ժպտացիր և այդ ժամանակից քո երեսդ պայծառա-
ցաւ: Յետոյ, երբ պարոնը կօշիկներ էր պատուի-
րում, դու ժպտացիր երկրորդ անգամ և այն օրուա-
նից աւելի պայծառացար: Եւ հիմա, երբ կնիկ մարդը
բերեց աղջիկներին, դու ժպտացիր երրորդ անգամ
և ամբողջ մարմնով պայծառացար: Ասա՛ ինձ, Մի-
քէլ, ինչիցն է, որ էդպէս լոյս է շողում քեզանից և
ինչո՞ւ դու երեք անգամ ժպտացիր:

Ու Միքէլն ասաց.

— Լոյսը նրա համար է շողում ինձանից, որ ես
պատժուած էի, իսկ հիմա Աստուած ներեց ինձ: Իսկ
ժպտացի երեք անգամ նրա համար, որ ինձ պէտք
էր իմանալ աստուածային երեք խօսք: Եւ ես իմա-
ցայ Աստուծոյ խօսքերը. մէկ խօսքն իմացայ, երբ քո
կինը խղճաց ինձ. դրա համար էլ առաջին անգամ
ժպտացի: Միւս խօսքն ես իմացայ, երբ հարուստը
կօշիկներ էր պատուիրում, և ես երկրորդ անգամ ժպտ-
ուացի. և հիմա, երբ ես տեսայ աղջիկներին, իմա-
ցայ երրորդ և վերջին խօսքն ու ես ժպտացի եր-
րորդ անգամ:

— Ասա՛ ինձ, Միքէլ, — հարցրեց Սեմեօնը, — ին-
չո՞ւ համար Աստուած քեզ պատժեց և որո՞նք են Աս-
տուծու էդ խօսքերը, որ ես էլ իմանամ:

Եւ Միքէլն ասաց.

— Աստուած ինձ պատժեց նրա համար, որ ես
չը լսեցի նրա խօսքը: Ես հրեշտակ էի երկնքում և
չը հնազանդուեցի նրան:

Ես հրեշտակ էի երկնքում և Աստուած ինձ ու-
ղարկեց մի կնոջ հոգին առնելու: Թուայ, իջայ ես
երկիր, ի՞նչ տեսնեմ, — պտուկած է անկողնում մի
կին — հիւանդ, անտէր. ծնել է երկու աղջիկ — Չուխ-
տակներ: Աղջիկները գլորվում են այս ու այն կողմն
ու մայրը չէ կարողանում վերցնել նրանց ու ծիծ տալ:
Երբ կինը տեսաւ ինձ, հասկացաւ. իսկոյն, որ Աս-
տուած ուղարկել է հոգին առնելու, լաց եղաւ ու
ասաց. «Հրեշտակ Աստուծոյ, իմ մարդուս նոր թա-
ղեցին — անտառի մէջ ծառ ընկաւ վրէն ու մեռաւ:
Ես ոչ քոյր ունեմ, ոչ հօրաքոյր, ոչ տատ, ոչ սք
չունեմ, որ իմ որբերիս պահէ, մեծացնէ: Մի առնիր

դու իմ հոգիս, թող, որ ես ինքս երեխաներիս պահեմ, մեծացնեմ, ոտքի կանգնեցնեմ: Երեխաները չեն կարող առանց հօր ու մօր ապրել»: Ու լսեցի ես մօր աղաչանքը. վերցրի երեխաներից մէկին, դրի գիրկը, որ ծիծ ուտէ, միւսին ձեռքը տուի և բարձրացայ երկինք Աստծու մօտ: Թոայ Աստծու մօտ և սասցի. «Ձր կարողացայ ես ծնողի հոգին առնել: Հայրը ծառի տակ է ընկել ու մեռել, մայրը շուխտակ է բերել և խնդրում է չառնել հոգին: Ասում է. «Թող, որ ես երեխաներիս պահեմ, մեծացնեմ, ոտքի կանգնեցնեմ: Երեխաները չեն կարող առանց հօր ու մօր ապրել»: Ես չառայ ծնողի հոգին»: Եւ Աստուած սասց. «Գնա՛, առ ծնողի հոգին և դու կիմանաս երեք խօսք—կիմանաս, թէ ինչ կայ մարդկանց մէջ, և ինչ չէ տուած մարդկանց, և ինչով են նրանք կեդանի: Երբ կիմանաս՝ կը վերադառնաս երկինք»: Յետեկայ ես երկիր ու առայ ծնողի հոգին:

Երեխաները թողին մօր ծծերը. անկենդան մարմինն ընկաւ մահճակալի վրայ, ճիւեց աղջիկներից մէկին ու ոտքը դուրս գցեց: Բարձրացայ ես գիւղից վեր, ուզում էի հոգին տանել Աստծու մօտ, բայց քամին բռնեց ինձ, իմ թևերն կախուեցին ու թափուեցին և հոգին մենակ գնաց Աստծու մօտ, իսկ ես ճանապարհի մօտ վայր ընկայ երկիր:



XI.

Եմեօնն ու Մատրեօնան հիմա հասկացան, թէ ում էին իրանք հագցրել ու կերակրել և ով էր իրանց հետ ապրողը: Ու լաց եղան նրանք երկիւղից և ուրախութիւնից:
Հրեշտակը շարունակեց.

—Մնացի ես դաշտում մենակ ու մերկ: Առաջ ես չը գիտէի

մարդկային կարիքը. չը գիտէի ոչ ցուրտ, ոչ քաղց, ու մարդ դարձայ: Քաղցից սիրտս գնում էր, ցրտից սառել, փէտացել էի և չը գիտէի, թէ ինչ անեմ: Տեսայ, որ դաշտում մատուռ է շինած Աստծու համար, մօտեցայ Աստծու մատուռին, ուզում էի պարսպարուել նրա մէջ: Մատուռը փակած էր կուրպէքով ու չէր կարելի մտնել նրա մէջ: Ու նստեցի ես մատուռի ետևը, որ պաշտպանուեմ քամուց: Իրիկունն եկաւ, ես աւելի քաղցեցի, սառայ և ամբողջ մարմնով տանջուեցի: Յանկարծ լսում եմ—մարդ է գնում ճանապարհով, կօշիկներ է տանում ու ինքն իրան խօսում է: Առաջին անգամն էր, որ ես տեսնում էի մարդկային մահկանացու դէմքը մարդ դառնալուցս յետոյ. զարհուրելի թւաց ինձ այդ դէմքը և ես շուռ տուի նրանից իմ երեսս: Եւ լսում էի ես, որ այդ մարդն ինքն իրան խօսում է այն բանի մասին, թէ ինչպէս ձմեռ ժամանակ ցրտից պահպանէ

իր մարմինը, ինչպէս կնոջն ու երեխաներին կերակրէ: Ու ես մտածեցի. «Ես մեռնում եմ ցրտից ու քաղցից, բայց ահա անցնում է մի մարդ, որ միայն մտածում, թէ ինչպէս իրան ու կնոջը մուշտակով պաշտպանէ և հացով կերակրէ: Նա չէ կարող ինձ օգնել»: Մարդը տեսաւ ինձ, մոայլուեց, աւելի զարհուրելի դարձաւ և անցաւ մօտիցս: Ես յուսահատուեցի: Յանկարծ տեսնեմ՝ մարդը յետ է գալիս: Նայեցի և չը ճանաչեցի՝ առաջուայ մարդուն. այն ժամանակ նրա գէմքի վրայ մահ էր տիրում, իսկ հիմա յանկարծ նա կենդանացել էր և ես նրա մէջ ճանաչեցի Աստծուն: Նա մօտեցաւ ինձ, շոր հագցրեց, վերցրեց ու հետը տարաւ իր տունը: Մտայ ես նրա տունը, մեր գէմքերաւ մի կին ու սկսեց խօսել: Կինն աւելի զարհուրելի էր աղամարդուց—մահուան հոտ էր փչում նրա բերանից և ես չէի կարողանում շունչ քաշել մահուան գարշելի բուրբուրից: Կինը կամենում էր ինձ դուրս գցել տանից, գցել փողոցի ցրտի մէջ և ես գիտէի, որ նա կը մեռնի, եթէ ինձ դուրս անէ: Եւ յանկարծ նրա մարդը յիշեցրեց նրան Աստծու անունը ու կինը բոլորովին փոխուեց: Եւ երբ նա իրիկնահաց տուեց մեզ ուտելու ու ինքն սկսեց նայել ինձ վրայ, ես էլ նայեցի նրան՝ արդէն նրա մէջ այլևս մահ չը կար. նա կենդանի էր և ես նրա մէջ ճանաչեցի Աստծուն:

Ու յիշեցի ես Աստծու առաջին խօսքը. «Կիմանաս, թէ ինչ կայ մարդկանց մէջ»: Եւ ես իմացայ, որ մարդկանց մէջ սէր կայ: Ես ուրախացայ, որ Աստուած սկսել էր յայտնել ինձ այն, ինչ որ խոստացել էր, և ես առաջին անգամ ժպտացի: Բայց բոլոր բանը դեռ ես չէի կարող իմանալ: Ես չէի կարողա-

նում հասկանալ, թէ ինչ չէ տուած մարդկանց և ինչով են մարդիկ կենդանի:

Սկսեցի ես ապրել ձեզ մօտ ու մի տարի մնացի: Եկաւ մի մարդ պատուիրելու այնպիսի կօշիկներ, որ մի ամբողջ տարի ոչ մաշուին, ոչ պատռուին և ոչ էլ ծռուին: Ես նայեցի նրան և յանկարծ նրա ետևում տեսայ իմ ընկերոջս, մահուան հրեշտակին: Ոչ ոք, բացի ինձանից, չը տեսաւ այդ հրեշտակին, բայց ես ճանաչում էի նրան և գիտէի, որ արևն այդ օրը դեռ մայր չը մտած, հարստի հոգին կառնուի: Եւ ես մտածեցի ինձ ու ինձ. «Մարդը պաշար է պատրաստում իրան ամբողջ տարուայ համար ու չը գիտէ, որ կենդանի չի մնայ մինչև իրիկուն»: Ու յիշեցի ես Աստծու միւս խօսքը. «Կիմանաս, թէ ինչ չէ տուած մարդուն»:

Թէ ինչ կայ մարդկանց մէջ՝ ես արդէն գիտէի: Այժմ ես իմացայ, թէ ինչ չէ տուած մարդկանց: Մարդկանց չէ տուած իմանալ, թէ ինչ է հարկաւոր նրանց՝ իրանց մարմնի համար: Եւ ժպտացի ես երկրորդ անգամ: Ուրախացայ, որ տեսայ իմ ընկեր հրեշտակին և որ Աստուած յայտնեց ինձ միւս խօսքը:

Բայց բոլոր բանը ես չը կարողացայ հասկանալ: Չը կարողացայ ես հասկանալ, թէ ինչով են մարդիկ կենդանի: Եւ ես ապրում էի ու սպասում, թէ երբ Աստուած կը յայտնէ ինձ վերջին խօսքը: Եւ վեցերորդ տարին եկան երկուորեակ աղջիկները մի կնոջ հետ, և ես ճանաչեցի աղջիկներին ու իմացայ, թէ ինչպէս են նրանք մնացել կենդանի: Իմացայ և մտածեցի. «Մայրն աղերսանք էր անում երեխաների համար և ես հաւատացի մօրը—կարծում էի, թէ երեխաները չեն կարող ապրել անհայր ու անմայր, այն

ինչ մի օտար կին կերակրեց ու մեծացրեց նրանց՝
 Եւ երբ կինը գթաշարժուած ուրիշի երեխաների
 վրայ՝ լաց եղաւ, ես նրա մէջ տեսայ կենդանի Աստ-
 ծուն ու հասկացայ, թէ ինչով են մարդիկ կենդա-
 նիւ Ես իմացայ, որ Աստուած յայտնեց ինձ վերջին
 խօսքն ու ներեց ինձ, և ես ժպտացի երրորդ անգամ:



XII.

մերկացաւ հրեշտակի մար-
 մինը, և հագաւ նա ամբողջո-
 վին լուսեղէն հանդերձ, այն-
 պէս որ աչքը չէր կարողանում
 նայել նրա վրայ. և խօսեց նա
 աւելի բարձր, այնպէս բարձր,
 որ կարծես ձայնը գալիս էր
 ոչ նրանից, այլ երկնքից: Եւ

հրեշտակն ասաց.

— Իմացայ ես, որ ամեն մարդ կենդանի է ոչ
 հոգսերով իր անձի մասին, այլ սիրով:

Մօրը չէր տուած իմանալ, թէ ինչ է հարկաւոր
 իր երեխաների համար, որ ապրեն: Հարստին չէր
 տուած իմանալ, թէ ինչ է նրան հարկաւոր. ու չէ
 տուած իմանալ և ոչ մէկ մարդու, թէ կօշիկներ են ար-
 դեօքհարկաւոր իրան կենդանի հագնելու, թէ չուտեր
 են պէտք իրկուան դէմ մեռածին հազցնելու համար:

Երբ ես մարդ էի, կենդանի մնացի ոչ այն բանով,
 որ ես ինքս իմ մասին հոգացի, այլ նրանով, որ սէր
 կար անցորդ մարդու և նրա կնոջ մէջ, ու ցաւեցին
 նրանք ինձ վրայ և սիրեցին ինձ: Որբերը կենդանի
 մնացին ոչ նրանով, որ հոգացին նրանց մասին, այլ
 նրանով, որ սէր կար օտար կնոջ սրտի մէջ և նա խղճաց
 ու սիրեց նրանց: Եւ կենդանի են բոլոր մարդիկ ոչ

նրանով, որ իրանք հոգում են իրանց մասին, այլ նրանով, որ սէր կայ մարդկանց մէջ:

Առաջ էլ ես գիտէի, որ Աստուած կեանք է տուել մարդկանց և կամենում է, որ նրանք ապրեն. այժմ հասկացայ ես և մի ուրիշ բան:

Ես հասկացայ, թէ Աստուած չէ կամեցել, որ մարդիկ իրարից զատ-զատ ապրեն և դրա համար էլ չէ յայտնել նրանց ինչ որ նրանցից ամեն մէկին պէտք է. այլ կամեցել է, որ մարդիկ ապրեն միասին ու միաբան, դրա համար էլ յայտնել է նրանց այն, ինչ որ նրանց բոլորին միասին և բոլորի համար պէտք է:

Ես հասկացայ հիմա, որ մարդկանց թւում է միայն, թէ իրանք կենդանի են, որովհետև հոգում են իրանց մասին. ոչ, նրանք կենդանի են միմիայն սիրով: Ով սիրոյ մէջ է, նա Աստուծո մէջ է և Աստուած նրա մէջ, որովհետև Աստուած սէր է:

Եւ հրեշտակը փառաբանութիւն երգեց Աստուծուն ու նրա ձայնից թնդաց խրճիթը: Բացուեց առաստաղն և հրեղէն սիւն կանգնեց երկնքից մինչև գետին: Եւ Սեմեօնը, կինն ու երեխաներն ընկան երեսների վրայ: Ու հրեշտակի մէջքի վրայ թևեր բացուեցին և բարձրացաւ նա երկինք:

Ու երբ Սեմեօնն ուշքի եկաւ, տունը նոյնն էր, ինչ որ առաջ, ու այնտեղ ոչ ոք չը կար, բացի իր ընտանիքից:



Faint, illegible text at the top of the page, possibly a header or title.

First paragraph of faint, illegible text.

Second paragraph of faint, illegible text.

Third paragraph of faint, illegible text.


Fourth paragraph of faint, illegible text.

Fifth paragraph of faint, illegible text.

Sixth paragraph of faint, illegible text.

Seventh paragraph of faint, illegible text.

Eighth paragraph of faint, illegible text.




Two small, handwritten marks or characters, possibly a signature or initials.

ԱՐՄ.
3-3166

«ԱԻԵՏԻՍ ՊՕՂՈՍԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՖՕՆԴ»

Լ ո յ ա Ե ն ս Ե ս Ե լ՝

- № 1. Պատմուածքներ կենդանիների կեանքից
(պատկերագարը), 1908 թ. Գինը՝ 40 կ.
- № 2. Լ. Ն. Տ ո լ ս տ օ յ. — Ժողովրդական պատ-
մուածքներ (հեղինակի ծննդեան ութսունա-
մեայ յօրելեանի առիթով). Ա. Պրակ 1908
թ., գինը 30 կ.
- № 3. Վ ի լ Ն Ե լ Բ Հ ա ո լ Ֆ. — Ինքնակոչ իշխա-
նը (պատկերագարը), 1908 թ. Գինը՝ . . 10 կ.
- № 4. Լ. Ն. Տ ո լ ս տ օ յ. — Ժողովրդական պատ-
մուածքներ (հեղինակի ծննդեան ութսունա-
մեայ յօրելեանի առիթով). Բ. Պրակ 1908
թ. գինը 20 կ.



Գրքերի պահեստը գտնվում է Թիֆլիս՝ «Գուտ-
տենքերգ» գրախանութում:

«Ազգային գրադարան»



NL0329159

14086

Арм.

3-3166a